AZG NEW 1.QXD 7/22/2009 11:06 PM Page 1

Ազգ
Azg
23 ՅՈՒԼԻՍ 2009 ՀԻՆԳՇԱԲԹԻ 137 (4273)
ISSN: 1829-1651

## «Անկման տեմպն ավելի ցածր է, քան կանխատեսել էինք»

Անդրադառնալով ազգային վիճակագրական ծառայության հրապարակած այս տարվա հունվար-հունիս ամիսների Հայաստանի տնտեսական ցուցանիշներին, համաձայն որոնց՝ արձանագրվել է 16,3 տոկոս տնտեսական անկում, վերոնշյալ կարծիքը երեկ հայտնեց վարչապետ **Տիգրան Սարգսյանը:** Նա նշեց, որ 6 ամիսների ցուցանիշները վկայում են դրական միտումների առկայության մասին: Վարչապետն ընդգծեց հատկապես շինարարության տեմպերի կտրուկ աճը եւ մյուս ճյուղերում արձանագրված աճի ցուցանիշները հունիս ամսին: Տիգրան Սարգսյանը նշեց, որ 20 տոկոս անկման չենք հասնի եւ հույս հայտնեց, որ մինչեւ տարեվերջ ՀՆԱ ցուցանիշը կբարելավվի:

**Ա. Ս.**

# Կռիվը վերջինը կդառնա ադրբեջանական պետության համար

*Հայ կամավորական ազատամարտիկի մտորումներ*

**ՖԵԼԻՔՍ ՊՈՂՈՍՅԱՆ**
**գնդապետ**

Վերջերս հաճախ եմ կարդում ամենատարբեր տրամաչափի ադրբեջանցիների՝ հոխորտանքներով լի հրապարակումներ: Պատերազմի ու խաղաղության մասին եք խոսում, պատերազմի վերսկսման վտանգը ձեզ ավելի պետք է հուզի, ունեք բազմաթիվ նավթահորեր ու նավթամուղներ, թող դա՛ ձեզ անհանգստացնի: Առանց դրանց դուք կործանված եք: Բնությունից առատ ստացել եք ամեն ինչ, իսկ աշխատանքով դժվար կստեղծեք: Կուզե՞ք հիշեցնեմ պատերազմական ժամանակները. մենք խրամատները քլունգով ու բահով էինք փորում, դուք՝ տրակտորներով ու բուլդոզերներով, եւ երկաթբետոնե կոնստրուկցիաներ էիք տեղադրում: Որտեղ տեխնիկա չկար՝ քանի սանտիմետրանոց խրամատներ էիք փորում, դրա համար էլ քամակներդ չէիք կարողանում պահել, առաջին իսկ հարվածից նապաստակի նման լքում էիք դիրքերը:

Զենք-զինամթերք միշտ էլ շատ եք ունեցել: ԽՍՀՄ 4-րդ բանակի՝ գրեթե ողջ Անդրկովկասի պաշտպանության համար նախատեսված հսկայական զինապահեստները ձերն էին: Մեր հրետանու, «Գրադների» մեկ երկու դիպուկ հարվածներին քառասուն-հիսունով էիք պատասխանում, առանց խնայելու՝ գիշեր-ցերեկ էիք ռմբակոծում:

Մենք աշխատելու ենք սովոր, շատ ջերմ ենք սիրում մեր հայրենիքը, մեր տունն էինք պաշտպանում, դուք էիք փորձում նվաճել, որը չստացվեց:

Երկու-երեք օրինակը կրկին սառը ջուր կլցնի ձեր գլխին եւ կթարմացնի ձեր սկլերոտիկ հիշողությունը, թե ինչպես բազմաթիվ անգամներ մարդկային ռեսուրսներով, զինամթերքով ու զրահատեխնիկայով գերազանցող ուժերով «փառքով» լքեցիք Շուշին ու Լաչինը, Աղդամն ու Ֆիզուլին, եւ այլն, եւ այլն...

Երկու անգամ ձեր բախտն ուղղակի բերեց. միջնորդների միջոցով հաստատված զինադադարը խանգարեց կատարյալ ջախջախումից, այլապես ձեր «քաջարի զորքերը» նապաստակի նման մինչեւ Կասպից ծով էին փախչելու: Ականջներիս մեջ մինչեւ հիմա էլ հնչում է 94 թվականին Մարտակերտ զոռով հավաքված, Բերիայի մեթոդներով, ՆԿՎԴ-ական զորքերի կողմից մահվան բերան քշված երիտասարդ զինվորների «ա՜յ անա, ա՜յ անա» վայնասունը եւ թիկունքից «անա» հայհոյողների գոռգոռոցները: *Տես էջ 2*

ՀԱՅԱՑՔ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ

## Երբ հարցերը նոր հարցեր են ծնում

**Այն տեսակետը կա, որ եթե մադրիդյան սկզբունքներին հասարակական հակազդեցություն չլիներ, ապա դրանք սահուն կիրարկում կունենային: Սրանով էր, երեւի, պայմանավորված հայաստանյան ու ղարաբաղյան հասարակական-քաղաքական կառույցների հայտարարությունների վերջին «շքերթը»: Եթե այսպիսի համերաշխությամբ ՀԿ-ներն ու քաղաքական ուժերը 1998-ին բարձրաձայնեին բանակցություններից ԼՂՀ-ի դուրս մնալու անհեռանկարայնության մասին, գուցե թե կարգավորման գործընթացն այլ հունով ընթանար:**

**Բայց արդյոք հասարակական-քաղաքական կառույցների այդօրինակ ակտիվացումը, կոնկրետ մադրիդյան սկզբունքների առնչությամբ, էական ազդեցությո՞ւն է ունեցել: Անշուշտ, հասարակական կարծիքը կարեւոր է, սակայն հազիվ թե Մինսկի խմբում ընդգրկված միջնորդների համար: Վերջիններս իրենց խաղաղարար առաքելությամբ, ըստ էության, պաշտպանում են սեփական երկրի աշխարհաքաղաքական շահերը տարածաշրջանում, իսկ հայկական ու ադրբեջանական շահերը ներկա դեպքում դիմադարձ ուղղություն ունեն:**

**Մենք չգիտենք՝ Դմիտրի Մեդվեդեւը փորձե՞լ է, ասենք, Մոսկվայում համոզել Իլհամ Ալիեւին՝ հրաժարվել Ղարաբաղից: Մեզ համար սա շատ կարեւոր է, ինչպես որ ադրբեջանցիների համար արժանապատվության հարց է ԼՂ-ն չտալը: Եվ տվյալ իրավիճակում, արդյոք նախընտրելի՞ է այնպիսի պաշտպանությունը, որը չի բխում մեր ակնկալիքներից:**

**Երբ հարցերը նոր հարցեր են ծնում, նշանակում է վաղաժամ է սպառիչ պատասխան գտնելը: Ավելորդ էմոցիաներ դրսեւորելը, կարծես թե, պարապ զբաղմունք է դառնում: Ոչ ոք չի կասկածում հայի՝ մեր սոսկական հայրենասիրությանը. ղարաբաղյան խնդիրն այն միակ հարթակն է, որտեղ դիմադիր, թե ընդդիմադիր ուժերի տեսակետները համընկնում են:**

**Ղարաբաղում ընդհանրապես տեսակետների միասնություն է՝ ամեն ինչ գնահատվում է ԼՂՀ անվտանգության դիտանկյունից: Թե՛ ազատագրված տարածքների մի մասի հանձնման եւ թե՛ կարգավիճակի վերաքվեարկման հեռանկարները զգուշավորության նույն հենքի վրա են: Այն, ինչ կարող է վտանգել ԼՂՀ հետագա գոյությունը, բացարձակ անընդունելի է, եւ բանակցություններին Ղարաբաղի մասնակցության հետաձգումը, փաստորեն, Ադրբեջանի պարտաս չլինելու բացատրության մեջ կարելի է տեսնել, ինչը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները եւս լավ են հասկանում:**

**Միջնորդներն էլ, մենք էլ՝ սպասում ենք, թե Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարները երբ լիարժեք համաձայնության կգան քննարկվող սկզբունքների շուրջը: Այդ համաձայնությունը կարող է ուշանալ, կարող է նույնիսկ տեղի չունենալ, էականն այն է, որ ղարաբաղյան հակամարտության լուծումներում ընդգրկված կողմերը, այդ թվում՝ միջնորդները, գիտակցում են ԼՂՀ-ի վճռական շահերը՝ նրա անվտանգության պահովման ու ինքնորոշման իրավունքի իրացման առումներով: Իսկ այդ գիտակցումը, միեւնույն է, բերելու է Ղարաբաղի հետ Ադրբեջանի առդեմ բանակցելուն: Անգամ միջնորդներն են խոստովանել, որ առանց Ղարաբաղի՝ հարցի վերջնական լուծում չի լինի: Իսկ քանի դեռ ԼՂՀ-ն իր խոսքը չի ասել, անիմաստ է ինչ-որ դրական բան հուսալը:**

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

## Հակերական հարձակում Arminco ընկերության վրա

**Հակերական հզոր հարձակում է կատարվել Arminco փրովայդերական ընկերության վրա, ինչի հետեւանքով տասնյակ կայքէջերի, այդ թվում եւ «Ազգի» բազմաթիվ ընթերցողներ չեն կարողացել լիարժեք օգտվել ինտերնետային տարբերակից: Ըստ որոշ տվյալների՝ հարձակումը կատարվել է Սաուդյան Արաբիայից եւ Հարավային Կորեայից: Հարձակումը շատ կազմակերպված եւ հզոր բնույթ է կրել, որը սկսվել է դեռ շաբաթ օրը, սակայն երեկվա գրոհը էլ ավելի հզոր է եղել եւ մեծ ջանքեր է պահանջվել այն չեզոքացնելու համար: Սակայն ի տարբերություն ադրբեջանական եւ թուրքական հակերների նմանատիպ հարձակումների, որոնք հակահայկական հայտարարություն են զետեղում, նման փորձեր այս անգամ չեն գրանցվել:**

**Այս իրողությունը ապացուցում է, որ Հայաստանում, ինտերնետային անվտանգության բնագավառում գոյություն ունեն լուրջ բացթողումներ եւ խնդիրներ:**

## Երեք դասավորուհիները, վրացերենն ու «աչքակապ» Թեմիսը

*Ի վերջո կլինի զենքերի փոխշահմնություն Չախալյանների գործում, այն էլ իրենց հաշվին*

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Թբիլիսի**



Լեզվական խնդիրը մեծագույն հարց է, որ այդպես էլ թերեւս երկար ժամանակ լուծում չգտնի Վրաստանում: Որ ջավախքցին չգիտի վրացերեն, բնավ արդարացնելու չէ, թեեւ դրանում ինքը չէ մեղավոր, այլ նորմալ ուսուցիչների բացակայությունը: Եվ վրացական իրականության յուրաքանչյուր ոլորտում լեզվի հարցն այնպես է վնասում Վրաստանի ազգությամբ հայ քաղաքացիների շահերը, որ իրավապաշտպանության մասին խոսելը դառնում է անիմաստ:

«Միասնական Ջավախք» ժողովրդական դաշինքի առաջնորդ Վահագն Չախալյանի դատավարությունը յուրօրինակ ապացույց է լեզվի չիմացության պայմաններում սեփական իրավունքների պաշտպանության դժվարության: Միեւնույն ժամանակ, վրացական արդարադատությունն էլ արդեն որերորդ անգամ թարգմանությունների առումով այնպիսի վիճակ է ստեղծում, որ ոչ Չախալյանի խոսքերն են հասնում դատավորին, ոչ էլ նրանցը՝ մեղադրյալին:

Երեկ Թբիլիսիում քրեական գործերով վերաքննիչ դատարանը սկսեց Վահագն Չախալյանի եւ նրա հոր ու եղբոր գործի վերաքննիչ բողոքի քննությունը: Ու առանձնակի առաջընթաց չգրանցելով՝ հետաձգեց այն մինչեւ սեպտեմբերի 18-ը: *Տես էջ 3*

## Արման Բաբաջանյանի առողջական վիճակի մտահոգությամբ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը գրավոր դիմել է ՀՀ արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանին «Ժամանակ» օրաթերթի խմբագիր, ներկայումս դատապարտյալ Արման Բաբաջանյանի առողջական խնդիրների հետ կապված կազմակերպելու համապատասխան բժշկական զննություն եւ «առողջության վատթարացման վերաբերյալ մտավախությունը հաստատվելու դեպքում միջոցներ ձեռնարկել նրա առողջական վիճակը բարելավելու նպատակով»:

Հուլիսի 21-ին դատապարտյալ Արման Բաբաջանյանը դիմել է Ա. Հարությունյանին՝ աշխատակազմի աշխատակիցների հետ հանդիպման խնդրանքով: ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ կատարած նրանց այցից եւ Արման Բաբաջանյանի հետ ունեցած առանձնազրույցից հետո տեղեկացել են դատապարտյալի վատթարացող առողջական վիճակին. այն է՝ գլխուղեղում հայտնաբերված յոթուկես միլիմետր մեծությամբ ուռուցքաշիտ գոյություն, որը մեկ տարի առաջ եղել է 2 միլիմետր:

Մինչեւ Արման Բաբաջանյանի պատիժ կրելու ժամկետի ավարտը՝ այս տարվա սեպտեմբերի 16-ը, առողջական վիճակի բարելավման համար անհրաժեշտ ժամանակահատվածի այս կորուստը հնարավոր է, որ անդառնալի հետեւանքներ ունենա, ուստի անհապաղ են դառնում բժշկական զննության եւ համապատասխան միջոցներ ձեռնարկելու խնդիրները, ընդհուպ նրան ազատ արձակելը:

## Ոչ պաշտոնական տվյալներով՝ Հայաստանում թմրամոլների թիվը 30.000 է

**ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ**

Հայաստանում բուժման նպատակով նարկոլոգիական կենտրոն դիմողների թիվը տարեկան աճում է 100 տոկոսով, թմրանյութ օգտագործողների քանակը՝ 10 տոկոսով: Եվ թեպետ տարածաշրջանում եւ անգամ ամբողջ աշխարհում թմրանյութ օգտագործողների ցուցանիշով Հայաստանը ամենաբարվոք պայմաններում է, նարկոլոգիական կենտրոնի տնօրենը «բարվոք» բառը գերադասում է օգտագործել միայն չակերտների առկայության դեպքում:

2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հաշվառված է 1141 թմրամոլ, որոնցից 12-ը կանայք են: Սրանք այն մարդիկ են, ովքեր երբեւիցե դիմել են բուժօգնության: Մինչդեռ, միջազգային կազմակերպությունների ներկայացրած հաշվարկներով, Հայաստանում կա



30.000 թմրամոլ, նրանցից 5000-7000-ը թմրանյութն ընդունում են ներերակային ճանապարհով: Կենտրոնի ղեկավարի տվյալներով, Թբիլիսիում միայն հաշվառված թմրամոլների թիվը 45.000-ն է, Բաքվում՝ 28.000:

*Տես էջ 2*

ԱԶԳ Շեշտադրումներ

# Սամվել Բաբայան. «Պատերազմը հաղթում են մտքով, ոչ թե զենքի կամ մարդկանց քանակով»

«Էն, որ Հայաստանի իշխանությունները 7 շրջանը զիջում են Ադրբեջանին, սա փաստ է: Բայց Ադրբեջանը վերցնո՞ւմ է այդ 7-ը, այդ 7-ով բավարարվո՞ւմ է: Ոչ: Չի բավարարվում, 12-ն է ուզում, Ղարաբաղն էլ հետը: Սա է պրոբլեմը: Ես էլ դրա համար ասում եմ, որ բավարարող չկա, ցանկության դեպքում էլ չեն կարող», երեկ «Դե ֆակտո» ակումբում հայտարարեց ԼՂՀ պաշտպանության նախկին նախարար **Սամվել Բաբայանը**:

Նրա խոսքով, այդ մոտեցման հետեւանքով այսօր հայկական կողմն է պատկերանում պարտված:




«Դա սխալ է, կապ չունի՝ ով է սկսել, Ռոբերտ Քոչարյան, Օսկանյան, Սերժ Սարգսյան, Լեւոն Տեր-Պետրոսյան, որն է սկսել, կապ չունի: Դա անընդունելի է: Հաղթող կողմը ներկայանում է որպես պարտված: Ես որ նայում եմ հեռուստատեսությամբ Ալիեւի նստելու ձեւն, իր պահվածքը, ինձ թվում է՝ մենք պարտվողն ենք, ինքը՝ հաղթողը: Թե՞ ձեզ չի թվում դա: Չի կարելի այդպես թույլ տալ, որ լկտիանան այդ չափի», ասում է Սամվել Բաբայանը:

Նա նշում է, թե 1993, 94, 95, 96, 97 թվականներին ինքը մասնակցել է բանակցություններին եւ հստակ հայտնել իր դիրքորոշումը, ինչի արդյունքը եղել է այն, որ չեն եղել կարգավորման այնպիսի առաջարկներ, ինչպես այժմ:

Լրագրողների հարցին, թե ի վերջո ինչի՞ հետեւանք է, որ այժմ ունենք այդօրինակ բանակցային ընթացք եւ միջնորդական առաջարկներ, Սամվել Բաբայանը պատասխանում է, որ դա չունենալու համար պետք էր բնակեցնել ազատագրված տարածքներն ու Ադրբեջանին եւ աշխարհին կանգնեցնել փաստի առաջ:

Մոլորություն է կարծելը, թե հնարավոր է Ղարաբաղի հարցում գալ որեւէ համաձայնության եւ պարտադրել Ղարաբաղին: Այսպիսի միտք արտահայտեց Սամվել Բաբայանը: Լրագրողներից մեկը հարցրեց, թե Ղարաբաղի ռազմական եւ քաղաքական իշխանության բարձրաստիճան գրեթե բոլոր ներկայացուցիչներն այսօր գրեթե միլիոնատերեր են, այդ միլիոններն էլ վաստակել ու պահում են Երեւանի իշխանության աջակցությամբ: Այդ միլիոնները Երեւանի ձեռքին Ստեփանակերտի վրա ազդելու եւ որոշում պարտադրելու լծակ չե՞ն:

«Չի կարելի ասել, որ Ղարաբաղի իշխանությունները որոշեցին, Հայաստանի իշխանության հետ եկան համաձայնության, ինչ ասեցին, ժողովուրդը կատարելու է: Ես ձեզ վստահեցնում եմ, սուտ է դա, չլինող հարց է: Ես կոնկրետ, կանգնելու եմ այդ ժողովրդի կողմը, եթե իրենք համաձայն չլինեն: Անտեր չենք թողնելու: Պետք է ժողովրդի հետ քննարկելով խնդիրը լուծել: Ժողովուրդն ընդհանրապես տեղյակ չէ ինչ է կատարվում: Մեկուսացրել են ուղղակի այդ ժողովրդին: Իրենց փոխարեն ինչ-որ մարդիկ խոսում են, տեղյակ էլ չեն ինչ են որոշում, ոնց: Նրանք գիտեն մի բան՝ ոչ մի հող էլ չենք տալու: Դե գնա, բացատրի», պատասխանում է Սամվել Բաբայանը:

Լրագրողները հարցրին նաեւ, թե Ղարաբաղի նախկին գրեթե բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան, Արկադի Ղուկասյան, եկել են Հայաստան ու ապրում են այստեղ, ո՞վ պետք է առաջնորդի Ղարաբաղի ժողովրդին: Սամվել Բաբայանը նշում է, թե ի տարբերություն մյուսների, ինքը չի եկել Հայաստան կարիերայի:

«Ես թողել եմ Ղարաբաղը, հեռացել: Որովհետեւ եթե մնամ, պետք է պայքարեմ, որովհետեւ գտնում եմ, որ սխալ է ընթանում: Պետք է ինձ փորձեն վերագրել, որ ես կարոտախտով եմ տառապում: Հենց դրա համար տեղափոխվել եմ Հայաստան: Սա առաջինը: Եվ ես գիտեմ, որ քաղաքականությունը վարվում է Երեւանում, եւ եթե ինչ-որ ազդեցություն պետք է ունենաս, պետք է ունենաս այստեղ: Իմ տեղափոխման պատճառը դա է: Ղարաբաղցիներն իրենք իրենց պետք է տեր կանգնեն եւ պետք է պահանջատեր լինեն, այլ ոչ թե մեկուսանան, լուռ ու մունջ ընդունեն այն, ինչ որ իրենց ասում են: Իսկ եթե ժողովուրդը, անհատը, անձը, չի ուզում պայքարել իր ազատությունների համար, ապա ոչ մեկին պետք չէ մեղադրել», ասում է Սամվել Բաբայանը:

Բաբայանը նշում է, թե ինքը մոտ ապագայում տեսնում է պատերազմի վտանգ: «Տեսնում եմ, եւ բոլոր հետախուզությունն է տեսնում, էն, ինչ որ կատարվում է այսօր Ադրբեջանում: Ինչ է առել, ինչ է անում, ինչքան զենք ունի, ինչ է պատրաստում: Երբ որ Բաքվում ադրբեջանցին հայերեն լեզու է անցնում, իրենց հետախուզական խմբերը, իմ կարծիքով, Պարսկաստանը չի գրավելու, եւ ոչ էլ Վրաստանը, ոչ էլ Ռուսաստանը», ասում է Սամվել Բաբայանը:

Հարցին, թե արդյոք պատրա՞ստ է մեր բանակը, Սամվել Բաբայանը պատասխանում է, թե հարցը պետք է ուղղել ռազմական գործիչներին: Միեւնույն ժամանակ Սամվել Բաբայանը վստահեցնում է, որ պատերազմ սկսելու դեպքում Ադրբեջանը մեծ կորուստ է կրելու, քանի որ պատերազմը հաղթում են մտքով, ոչ թե զենքի կամ մարդկանց քանակով: Սամվել Բաբայանը հիշեցնում է, որ Ադրբեջանի բնակավայրերը ճակատային ներկայիս գծից, հայկական դիրքերից մի քանի հարյուր մետր են հեռու եւ պատերազմ սկսելու դեպքում Ադրբեջանն առնվազն 2 միլիոն նոր փախստականներ է ունենալու եւ նավթի փողերով ստիպված է լինելու ոչ թե բանակը զինել, այլ փախստականներին կերակրել:

Նախկին «Դաշինք» կուսակցության հիմնադիր Սամվել Բաբայանը, որի կուսակցությունը հայտարարվեց, թե լուծարվեց ՀՌԱԿ-ի հետ միավորվելու համար, տեղյա՞կ է այժմ ՀՌԱԿ-ի շուրջը տեղի ունեցող գործընթացներին, Սամվել Բաբայանը նշեց. «Տեղյակ չեմ ՀՌԱԿ-ի շուրջը ինչ-որ կատարվում է, ցանկություն էլ չունեմ տեղեկանալու»:

«Կապել ինձ ինչ-որ մի քաղաքական ուժի կամ կուսակցության հետ, իմաստ չունի: Ամեն րոպե, կարող է հենց վաղը, պետք լինի, մտնեմ քաղաքականություն եւ ակտիվանամ», ասում է Սամվել Բաբայանը, նշելով, որ իր որոշելիքն է, թե հատկապես որ ուժի հետ կլինի ակտիվանալու դեպքում:

**Ն. Ս.**

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

# Կռիվը վերջինը կդառնա ադրբեջանական պետության համար

*1-ին էջից*

**Հայր Ալիեւի ավանտյուրան տապալվեց. ծեր աղվեսը զգաց կործանման անխուսափելիությունը եւ սսկվեց: Հիմա որդին է անցել հոխորտանքների: Թող փորձի բախտը: Գահից կզրկվի եւ հարեւան պետությունը կարգին երկիր կդառնա միգուցե:**

**Մարդկային գործոնն է ամենագլխավորը, այդ զենքն ու զինամթերքը գործածող է պետք, արեւելյան ասացվածքն ասում է. «Ձին ձիավորով է հրեղեն»: Թե՞ էլի հույսը դրել եք մոջահեդների ու այլ վարձկանների վրա, որոնք հանդիպելով հայ ռազմական ոգուն, առանց փողերը ստանալու էլ էին փախչում ռազմադաշտից: Ես միայն իմ տեսած մեկ տասնյակից ավելի դեպքերն եմ հիշում, երբ մեր ուժերին տասնապատիկ գերազանցելով՝ դիրքեր ու բնակավայրեր եք թողել: Կայծակնային կամ երկարատեւ պատերազմների սցենարներ եք մտմտում, պատերազմի հենց սկզբից կզրկվեք ձեր նավթից ու նավթամուղներից: Իմիջիայլոց, հիշեցնեմ ձեզ, որ նավթահանքերը երկար ու ուժեղ են վառվում: Վերջ կտրվի ձեր հարստության միֆին ու վերջնականապես կկործանվեք նավթահանքերի հրդեհներում:**

**Մի քանի դեպք հիշեցնեմ ձեր հատուկ նշանակության հետախուզական-դիվերսիոն խմբերի ներթափանցման ու խայտառակ ոչնչացման վերաբերյալ: Յոթ հոգանոց այդ դիվերսիոն խմբին Քյանդ Հորադիսի տարածքում տասնինը տարեկան, վեց ամիս ծառայած երիտասարդ զինվորը մի պահունակ փամփուշտով երեսունինից րոպե գետնին է գամել, մինչեւ հասել են օգնական ուժերը, մի մասին գերեվարել, մյուսներին՝ ոչնչացրել: Իմ փառապանծ մարտական ընկեր, նախկին հողագործ, կամավորական ու հետո կոմբատ դարձած Հոսոն դավադրաբար իր վրա հարձակված տասներկու հոգանոց լավ պատրաստված խմբին երեք տեղից վիրավոր վիճակում մեն-մենակ փախուստի մատնեց: Ահա սրանք են ձեր ոգու տիպիկ օրինակները:**

**Դուք ձեր մաշկի վրա զգացել եք 93-ին հայկական զինուժի հարվածը, որից մինչեւ հիմա մրմռում եք: Հիշեցնում եմ ձեզ, որ այս ընթացքում ավելի ենք կատարելագործվել: Եթե ուզում եք իմանալ, չնայած իմ եւ իմ ժողովրդի խաղաղասեր ոգուն, կուզենամ, որ կռիվը սկսվի: Այն վերջինը կդառնա ադրբեջանական պետության համար, քանի որ կվերանա մի շարք ժողովուրդների բանտի վերածված ձեր մինի-կայսրությունը, իսկ կռիվ գնացող կամավորականներ, ինչպես այն ժամանակ, այդժամ էլ մեզանում հազարավորները կլինեն:**

**Գիտակցելով այս իրավիճակը, վստահ եմ՝ մեր ժողովրդի առաջնորդներն ու դիվանագետները կկատարեն իմաստուն քայլեր: Մեկ բան քննարկման նյութ չէ՝ արցախյան հատվածի հայությունն արել է իր անկախ ապրելու ընտրությունը վերջնական, այնտեղ արդեն քսան-քսանհինգ տարեկան, անկախության մեջ մեծացած սերունդ կա: Հետընթաց չի կարող լինել:**

**Արցախյան ազատամարտի տարիներին մեր ժողովուրդն իր լավագույն զավակների արյամբ կռեց հաղթանակը: Ժողովրդական ասացվածքը պնդում է. «Արյունը ջուր չի դառնա»: Նման հերոսների օրինակներին հետեւողներ շատ կան. մեծ զրկանքներ կրեցինք, բայց փառքով ու պատվով հաղթահարեցինք դրանք:**

**Լեյլա Յունուսովա անունով արտաքին գործերի նախարարության մամլո նախկին խոսնակի խոսքերն եմ հիշում, որ 1994 թվականին ասում էր. «Շուտով Ադրբեջանում բոլորը հերոս կդառնան, իսկ Ադրբեջան պետություն չի լինի»:**

**Իմիջիայլոց, հիշեցնեմ ձեզ, որ պատերազմի ժամանակ եւ դրանից հետո մեզ մոտ ոչ մի կռվող տղա կենդանության օրոք հերոսի կոչման չի արժանացել, իսկ դուք հերոսության ձեր միֆերն եք առաջ քաշում ու Ղաչաղ Նաբու եւ Քյոռօղլու կերպարներով միայն կարող եք դաստիարակել ձեր խեղճ ու կրակ զինվորներին: Կրկին հիշեմ մի պատերազմական դրվագ, երբ հզոր սպառազինված Ֆիզուլի քաղաքն իր շրջակայքով խայտառակ կերպով պարտություն կրեց դիմացի ձորակի հայկական գյուղերում կազմված ջոկատներից, տասնչորս ռազմագերի վերցրինք: Ցավոք սրտի, երկու գերի էլ մենք ունեցանք: Գերիների փոխանակության խնդրով բանակցությունների ժամանակ ձեր կողմն առաջարկեց մեկը՝ յոթով: Մեր հրամանատարը դիպուկ ասաց, թե ի՞նչ է, մարդը ոչխարի հե՞տ ենք փոխում: Այդպես էլ չկամեցան տրամաբանական առաջարկ կատարել, որովհետեւ փող աշխատելու նպատակ ունեին, իսկ զինվորը, մարդը արժեք չունի ձեզ մոտ:**

**Պատերազմի դառնություններն ու զրկանքները մաշկիս վրա եմ զգացել, այն ծանր նստվածք է թողել իմ, ընտանիքիս եւ հայ ժողովրդի հոգում: Մինչեւ հիմա էլ սեւազգեստ մայրեր ու այրիներ կան, որոնք զգալով կորստի մեծությունը, նաեւ զգում են հպարտության ու պարծանքի չափը, դրա համար էլ մենք չենք ցանկանում պատերազմ, դրա համար էլ հիմնավոր ենք պատրաստվում խաղաղությանը:**

**Պատերազմից տասնհինգ տարի հետո նաեւ մի եզրակացության եմ հանգել, որ պարտադրված եմ ապրել իմ հարեւանների հետ: Այս իրավիճակը չի կարող հավերժ շարունակվել, լուծում անպայման լինելու է: Ուրեմն թող այն տրամաբանական ու խաղաղ լինի, առանց այսօրինակ անհեթեթությունների, բորենու որջ հրավերների, ազգամիջյան ատելության սերմանման: Կոռումպացված ալիեւների եւ մյուսների երեխաները վայելելու են այդ նավթադոլարները, խեղճուկրակների երեխաներն են կրկին «ա՜յ անա, այ ա՜նա» գոռալու: Այսօրվա հոխորտացողներն այն տարիներին չէին երեւում եւ ժողովրդական ասացվածքը կրկին ասում է. «Կռվից հետո բռունցքները չեն թափահարում»:**

**Եվ թող տա Աստված խոհեմություն եւ իրատեսություն մեր հարեւան ժողովրդին՝ հաշտվելու իրավիճակի հետ եւ հանգիստ թողնելու արցախահայությանը:**

**Ու խաղաղ գոյակցությամբ կառուցենք մեր երեխաների ապագան:**

# Ուղղում

**«Ազգ»-ի հուլիսի 21-ի «Հայտնի դարձան Երեւանի մամուլի ակումբի մրցանակակիրները» վերնագրով լուրի մեջ սխալ է սպրդել: Տպագրվել է, որ հեռմահու մրցանակ ստացավ լուսանկարիչ Ռուբեն Մանգասարյանը: Իրականում Ռուբեն Մանգասարյանի անվան մրցանակ է ստացել լուսանկարիչ Վահան Քոչարը:**

# Ոչ պաշտոնական տվյալներով՝ Հայաստանում թմրամոլների թիվը 30.000 է

*1-ին էջից*

Ներկայումս նարկոլոգիական կենտրոնում բուժվում է 11 հիվանդ: Սակայն գաղտնի բուժվողների թիվը մի քանի անգամ ավելին է: «Թմրամոլների տարիքը 25-45 է: Նրանք պարզապես ավելի երկար չեն ապրում: Սոցիալական խումբն այս պարագայում որեւէ նշանակություն չունի: Նրանց հիմնական մասը մայրաքաղաքից է», «Հայելի» ակումբում ասաց նարկոլոգիական կենտրոնի տնօրեն **Պետրոս Սեմերջյանը**:

2008 թվականին կենտրոն է դիմել 490 մարդ: Վիճակագրությունը սկսելով 2001 թվականից՝ Պետրոս Սեմերջյանը նշում է, որ աճ տարեցտարի գրանցվում է: «2001 թվականին մեզ դիմել էր ընդամենը 7 մարդ», ասաց նա:

Բուժումը Հայաստանի քաղաքացիների համար անվճար է: Կենտրոնում բուժումն ընթանում է երկու ուղղությամբ՝ կախվածության վերացում եւ առողջության վերականգնում: «10 օրից մինչեւ 6 ամիս ժամկետում կարելի է վերացնել կախվածությունը: Ընդ որում, ֆիզիկական կախվածությունն ավելի հեշտ է բուժվում, քան հոգեբանականը: Շատ հաճախ գերադասելի է լինում ժամանակավոր հաճույքը, եւ մեզ դիմում են, երբ արդեն ծանր վիճակում են», ասաց Պետրոս Սեմերջյանը: Բուժման դիմելուն խանգարում է ամոթը, հասարակության կարծիքը: Բացի դրանից, թմրամոլությունը քրեորեն պատժելի է: «Հայաստանում եթե կամովին դիմում են բուժման, ապա ազատվում են քրեական պատասխանատվությունից», հայտարարում է նարկոլոգիական կենտրոնի տնօրենը:

Կենտրոն շատ են դիմում Վրաստանից, Ռուսաստանից եւ Իրանից: «Ռուսաստանում 45.000 հայազգի թմրամոլ կա: Իրանում 3.5 մլն թմրամոլ կա, որն աշխարհում վատագույն ցուցանիշն է», ասաց Պետրոս Սեմերջյանը:

Պատանիներ թմրամոլների շրջանում կան: «Սա հենց այն շրջանն է, երբ սկսում են օգտվել թմրանյութերից: Թմրամոլ երեխաներ չկան: Մեկ-երկու դեպք եղել է մանկասան 12-13 տարեկան երեխաների շրջանում: Նրանք, սակայն տառապում էին թունամոլությամբ, երբ օգտվում են տարբեր նյութերից, հիմնականում՝ սոսինձ կամ բենզին», նկատեց Պետրոս Սեմերջյանը:

Կենտրոնի տնօրենը, ելնելով 28 տարիների իր փորձառությունից, նշում է, որ Հայաստանում առավելապես տարածված են հերոինը եւ կանեփից ստացվող թմրանյութը: «Պահանջարկի դեպքում առաջարկի պակաս չի լինում: Թմրանյութի հասանելիությունը կախված է գումարի չափից», նկատեց Պետրոս Սեմերջյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հարկային հաշվետվություններ նոր՝ «Հարկատու-3» համակարգով

Հարկային հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային «Հարկատու-3» համակարգի շնորհանդեսը երեկ տեղի ունեցավ «Էրեբունի» հյուրանոցում, որին մասնակցում էր նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Բացման խոսքով հանդես գալով՝ «Հարկատու-3»-ը ներկայացրեց պետական եկամուտների կոմիտեի նախագահ **Գագիկ Խաչատրյանը**: Անդրադառնալով նոր համակարգի առավելություններին, կոմիտեի ղեկավարը նշեց, որ նախ այն հնարավորություն է տալիս կոմիտեի ղեկավարությանը համակարգիչների միջոցով հետեւելու տարածքային հարկային տեսչությունների աշխատանքի արդյունավետությանն ու օպերատիվությանը: Բացի դրանից, «Հարկատու-3»-ը հարկ վճարողին վերաբերող տեղեկությունների միասնական շտեմարան է, որտեղ արտացոլվում են տվյալ հարկատուի բոլոր տվյալներն ու գործարքները:

Նորացված ծրագիրը ներառում է ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումների իրականացում, որի շնորհիվ հնարավորություն է ստեղծվում էապես կրճատելու պետեկամուտների կոմիտեի կողմից կատարվող ստուգումների քանակը եւ բարձրացնելու դրանց արդյունավետությունը: «Հարկատու-3»-ի գործարկմամբ լուծում է ստանում հրատապ խնդիրներից եւս մեկը՝ էլեկտրոնային հայտարարագրումը: Համակարգն ունակ է էլեկտրոնային եղանակով ընդունելու բոլոր տեսակի հարկային հաշվետվությունները, իսկ տեղեկատվական բազայում այդ հաշվետվությունների հաշվառման եւ խաչաձեւ համադրման հնարավորությունը զերծ կպահի հնարավոր կեղծիքներից: Այս համակարգի միջոցով հարկային մարմինները կստանան նաեւ առեւտրի կազմակերպման վայրերում (տոնավաճառներում) շահագործվող հսկիչ-դրամարկղային մեքենաների վերաբերյալ տեղեկությունները:



ՖՈՏՈԼՈՒՐ

Նոր համակարգի ստեղծումը կարեւորեց կառավարության աշխատակազմի ղեկավար **Դավիթ Սարգսյանը**: Նա հայտնեց, որ էլեկտրոնային կառավարման համակարգ է ներդրվել պետական 9 մարմիններում, որոնց թիվը, սակայն, հասնելու է 18-ի: Ելույթներով հանդես եկան նաեւ Հայաստանում Եվրոմիության ներկայացուցիչ **Ուֆֆե Ուլսենը**, Եվրոմիության «Էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում ՀՀ ՊԵԿ-ում» ծրագրի ղեկավար **Էնթնի Ջագուսը**:

«Հարկատու-3»-ի գործունեության մանրամասները ներկայացրեց IU Networks ընկերության ներկայացուցիչ **Գուրգեն Ներսիսյանը**: Այնուհետեւ «Վիվասել» ընկերության ներկայացուցիչը լրացրեց առաջին էլեկտրոնային հարկային հաշվետվությունը՝ ներկայացնելով այն պետեկամուտների կոմիտե:

Նոր համակարգի մասին լրագրողների հարցերին պատասխանելով, վարչապետ **Տիգրան Սարգսյանն** այն դրական համարեց մի քանի առումներով: Մասնավորապես, ներդրվում է նոր մշակույթ, բարձրանում է պահանջները հարկատուների եւ պետեկամուտների կոմիտեի աշխատակիցների նկատմամբ, հաշվետվությունները թափանցիկ են լինելու, ռիսկերը նվազելու են, ստեղծվելու են շտեմարաններ: Միաժամանակ, այս համակարգը հնարավորություն չի տալիս գործարարներին շրջանցելու իրենց հարկային պարտավորությունները: Վարչապետը նշեց, որ ստվերայնության մակարդակն այժմ շուրջ 40 տոկոս է եւ նոր համակարգը նույնպես կօգնի նվազեցնելու ստվերը:

Խոսելով առեւտրաշրջանառության մեջ ստվերայնության մակարդակի մասին, Տիգրան Սարգսյանն ընդգծեց, որ ցուցանիշները ցույց են տալիս, որ սպառումն ավելացել է, ինչը պայմանավորված է նրանով, որ շնորհիվ ՀԴՄ-ների առեւտրաշրջանառության ծավալներն ավելացել են 16 տոկոսով: Վարչապետը նշեց, որ բարեփոխումները արդյունավետ են եւ հավանական է, որ հարկային եկամուտների հավաքման եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջոցների շնորհիվ կապահովվի այս տարվա ճշգրտված բյուջեի կատարումը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «Էրգենեքոնը» բացահայտ հակահայ ուղղվածություն ունի

**«Էրգենեքոն» հանցավոր խմբի բացահայտումը վերջին շրջանում Թուրքիայի ներքաղաքական կյանքի կարեւոր իրադարձություններից է: «Էրգենեքոնի» դատավարության ընթացքը փորձագետները համարում են պայքար իսլամամետ քաղաքական ուժերի եւ զինվորականության միջեւ: «Էրգենեքոնի» հիմնական նպատակն էր Թուրքիայում ահաբեկչական գործողությունների միջոցով ստեղծել քաոս, իրականացնել զինվորական հեղաշրջում: Ի դեպ, Թուրքիայի նոր պատմության մեջ զինվորական հեղաշրջումները բավական շատ են: «Էրգենեքոնը» հայտնաբերվել է 2007-ին՝ զինամթերքի պահեստի բացահայտման ժամանակ: Այդ ընթացքում եղել են հարյուրավոր ձերբակալություններ, դատավարություններ, որոնք այսօր էլ շարունակվում են: Թուրքիայում կատարված մի քանի տասնյակ սպանությունների, պայթյունների, ահաբեկչությունների իրականացման համար մեղադրում են հենց այս խմբավորմանը:**

**Ողջ աշխարհի ուշադրության կենտրոնում հայտնված կազմակերպության պատմության ու հատկապես հակահայ ուղղվածության մասին երեկ «Արմաս» ակումբում խոսեց թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը: «Ձերբակալվածների մեջ կան բազմաթիվ մարդիկ, որոնք ունեն բացահայտ հակահայկական ուղղվածություն: 2005-ին ստեղծվեց «Թալեաթ փաշա» կազմակերպությունը, որի նախագահն էր Դողու Փերինչեքը: Այն պայքարում էր ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ: Հետագայում պարզվեց, որ այդ կազմակերպությունը սնվում է «Էրգենեքոնից», նկատում է թուրքագետը:**

**Ձերբակալվածներից պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուքը, փաստաբան Քեմալ Քերինչսիզը, Անկարայի առեւտրի պալատի նախագահ Սինան Այգունը ներգրավված էին Հրանտ Դինքի հալածման ու դատական գործընթացներում: «Երբ վերոնշյալ երեք անձանց ձերբակալեցին, հայտարարում էին, թե ձերբակալել են հակահայ գործունեության համար», հիշում է Մելքոնյանը:**

**«Էրգենեքոնի» մեկ այլ անդամ Իբրահիմ Շահինի 300 հոգանոց կազմակերպության ստեղծած ցուցակն էլ՝ «Ներքին մաքրություն» անվամբ, նպատակ ուներ ահաբեկչությունների միջոցով սպանելու Թուրքիայում հայազգի ներկայացուցիչներին: Բացահայտված ցուցակը գլխավորում էր Մեսրոպ արք. Մութաֆյանը:**

**«Երկու տարի առաջ Մալաթիայում տեղի ունեցած պայթյունն էլ «Էրգենեքոնի» ձեռագիրն էր: Այդ քաղաքում ապրում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ: Նպատակ ուներ քաղաքում տարբեր ազգությունների միջեւ թշնամանք, ատելություն սերմանել»:**

**Թուրքագետը նկատում է, որ «Էրգենեքոնի» բացահայտումն ու դատավարական գործընթացը դրական ազդեցություն կունենան Թուրքիայի՝ եվրոինտեգրման գործում: «Եթե Թուրքիան ցանկանում է դառնալ ԵՄ անդամ, պետք է հետամուտ լինի «Էրգենեքոնի» բացահայտմանը»:**

**Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների լավացմանն ու հոկտեմբերին ֆուտբոլային դիվանագիտությունը Անկարայում շարունակելուն, Մելքոնյանը հայկական գործելաոճում նկատեց մի շարք թերացումներ, որոնցից հատկապես առանձնացրեց Թուրքիայում ծայր առնող ազգայնամոլության նկատմամբ հայկական կողմի անուշադրությունը: Նա չի բացառում, որ Թուրքիայում կան լավատեսական դրսեւորումներ, սակայն դրանք կազմում են փոքրամասնություն:**

**«Թուրքիայի բնակչության մեծամասնությունն ազգայնամոլ է: Ֆուտբոլային հանդիպումը նախատեսված էր անցկացնել Կեսարիայում, սակայն տեղի ունեցան մի շարք միջոցառումներ, անցկացվեց ստորագրահավաք, եւ նախագահ Գյուլը փոխեց ֆուտբոլային հանդիպման անցկացման վայրը: «Ներողություն եմ խնդրում» ակցիան, որին մասնակցեց 30.000 մարդ, կարծես առաջնորդվում էր ազնիվ մղումներով: Սակայն, իրականում, նախաձեռնության կազմակերպիչներն այլ մտադրություն ունեին: Միջոցառումից 2 ամիս անց կազմակերպիչ Բասիք Օրանը հայտարարեց. «Վարչապետ Էրդողանը թող աղոթի մեր անձերի համար: Այս միջոցառման շնորհիվ սփյուռքը փափկեց, ցեղասպանություն բառը հանվեց միջազգային մամուլից»:**

**Բոլորը գովեցին Օրհան Փամուքի «Այստեղ մեկ միլիոն հայ է սպանվել» արտահայտությունը, սակայն որեւիցե մեկը հետագայում չհիշատակեց, որ Փամուքը մեկ ամիս անց ասաց, թե չի ասել, որ այդ մեկ միլիոն հային թուրքերն են սպանել», նկատում է թուրքագետը:**

**Թուրքական ազգայնամոլության համատեքստում Մելքոնյանը դժվարացավ խոսել հայ-թուրքական հարաբերությունների զարգացումների մասին: Միայն հավելեց, որ հայկական դիվանագիտությունը ձեւավորման փուլում է, մինչդեռ թուրքականը՝ հզոր եւ շատ հմուտ է:**

**«Լուրջ ակնկալիքներ ունենալն այնքան էլ խելամիտ չէ: Սակայն չպետք է մոռանալ, որ մեր դիվանագիտությունը փորձում է անել հնարավորության սահմաններում ամեն ինչ», եզրափակեց Ռուբեն Մելքոնյանը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Երեք դասավորուհիները, վրացերենն ու «աչքակապ» Թեմիսը

*1-ին էջից*

Ամենից առաջ վրացական վերաքննիչ ատյանի երեք կին դատավորները մի որոշ ժամանակ չէին գտնում այն փաստաթղթերը, որոնց հիման վրա Չախալյանների պաշտպանությունն արդեն մի երկար ժամանակ իրականացնում է Հայաստանից ներգրավված փաստաբան Ստեփան Ոսկանյանը: Թերեւս հարկ էր որեւէ կերպ խոչընդոտել Ոսկանյանի մասնակցությանը, սակայն վերաքննիչ ատյանում նրա մասնակցությանը խոչընդոտելը փաստաթղթերով ապահոված չլինելու հիմքով կարող էր հարցականի տակ դնել նույն այդ փաստաթղթերով նրա մասնակցությամբ առաջին ատյանի դատավարությունն ամբողջությամբ:

Ինչեւէ, պաշտպանական կողմը ներկայացնում էին Ստեփան Ոսկանյանը, Մարդու իրավունքների կենտրոնի ներկայացուցիչ Նինո Անդրիաշվիլին, վրացի փաստաբան Զուրաբ Ռոստիաշվիլին: Նրանց միջնորդությունները մերժվեցին բացառությամբ մեկի:

Պաշտպանական կողմը ներկայացրեց այն միջնորդությունները, ինչի համար էլ ըստ էության ներկայացել էր վերաքննիչ բողոք: Մասնավորապես, դատարանը չբավարարեց միջնորդությունը դատարան հրավիրելու գործով մի շարք վկաների, որոնք այդպես էլ չէին երեւացել առաջին ատյանի դատարանում: Չբավարարվեց նաեւ պաշտպանական կողմի խնդրանքը՝ անցկացնել Չախալյանների դեմ ներկայացվող մեղադրանքներից մեկի՝ ապօրինի զենքերի փորձաքննություն:

Որքան էլ տարօրինակ է, սակայն հենց այս ֆոնին միակ բավարարված միջնորդությունը վերաբերում էր կրկին փորձաքննությանը, եթե ուղղակի ասենք, մեղադրյալի հաշվին: Վերաքննիչ դատարանը բավարարեց գործում առարկայական ապացույց համարվող զենքերի այլընտրանքային դատամասնագիտական, միկրոմասնիկների եւ հոտի առկայության վերաբերյալ փորձաքննություն անցկացնելու միջնորդությունը:

Եվ մինչ կպարզեին, թե որքան ժամանակ է հարկավոր նման փորձաքննություն անցկացնելու համար, Վահագն Չախալյանը դատարանում սկսեց պատասխանել դատավորների հարցերին: Այնպիսի տպավորություն կարող էր ստեղծվել, թե դատավորների՝ հարցերի ժամանակ ցուցաբերած որոշ ակտիվությունը վերաբերում էր նյութի բովանդակությանը, այն է, թե ինչու էր ժամանակին Վահագն Չախալյանը կողմ, որ Ախալքալաքում համալսարան լինի:

Դատավորները փորձում էին Վահագնից ճշտել, թե արդյոք այստեղ վրացիներ չէի՞ն սովորելու կամ ինչո՞ւ վրացերեն սովորել համալսարանում եւ ոչ դպրոցում: Ինչպես ասում են, այստեղ քաղաքականացվածության հոտ է գալիս, բայց ապացույցներ ունենալու, այսինքն՝ որեւէ բան ձայնագրելու կամ լուսանկարելու միջնորդությունն արդեն մերժված էր եւ մնում էր միայն հանդիսատես լինել՝ վրացերենի ունկնդիր տարբերակով:

Բացառիկ էր նաեւ այն, ինչ տեղի էր ունենում Չախալյանի խոսքի ընթացքում: Նախ, նրան ուղղվող հարցերը ակնհայտորեն չէին թարգմանվում ամբողջությամբ, իսկ Վահագնի խոսքերը դատավորներին էին մատուցվում այնպիսի լակոնիկությամբ, որ դրանով հիացողները բոլոր դափնիները կզիջեին երեկվա դատավարության թարգմանչուհուն:

Ինչեւէ, սա այնքան էլ երկար չտեւեց, քանի որ պարզ դարձավ, թե փորձաքննության անցկացման համար անհրաժեշտ կլինի 20 օր: Դատարանն էլ, թերեւս հաշվի առնելով արձակուրդային վիճակները կամ մնալով Չախալյանների գործում հետաձգումների անպակասության տիրույթում, հետաձգեց դատական նիստը՝ շարունակության համար ընտրելով սեպտեմբերի 18-ը:

# ՀԵՆԿ ՀԿ-ն շարունակում է քայլերը սոցիալապես անապահովների պաշտպանության գործում

**ՀԵՆԿ հասարակական կազմակերպությունը արդեն մի քանի տարի աշխատում է հանրապետության ինը մարզերում եւ իրականացնում է ծրագրեր՝ ուղղված բնակչության իրազեկմանը, շահերի պաշտպանությանը եւ համայնքային խնդիրների լուծմանը: 2007 թվականին կազմակերպությունը հանդես եկավ օրենսդրական նախաձեռնությամբ՝ մշակեց առաջարկությունների փաթեթ, որով սահմանվում էին սոցիալապես անապահով քաղաքացիների օրինական իրավունքների եւ շահերի պաշտպանության մեխանիզմները: Այդ մեխանիզմների կարգի ստեղծումը պայմանավորված էր նրանով, որ թեեւ ՀՀ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ կետով սոցիալապես անապահով քաղաքացիների շահերի պաշտպանությունը պետք է իրականացնեին սոցիալական ծառայության տարածքային մարմինները, սակայն գործընթացը հնարավոր չէր իրականացնել համապատասխան մեխանիզմների բացակայության պատճառով: ՀԵՆԿ-ը կարեւորել է օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ հանրության իրազեկումը, քաղաքացիների օրինական իրավունքների եւ շահերի պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության հաղորդումը՝ մասնավորապես սոցիալական ծառայության տարածքային մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումներն իրենց նախաձեռնությամբ կամ հաճախորդների դիմելու դեպքում սոցիալապես անապահով քաղաքացիների օրինական իրավունքների եւ շահերի պաշտպանությունն իրականացնելիս:**

**Այդ նպատակով կազմակերպությունը հանրապետության ողջ տարածքով կազմակերպել է հանրային քննարկումներ, տպագրել տեղեկատվական գրքույկներ օրենսդրական նախաձեռնության եւ ընդհանրապես սոցիալական աջակցության պետական քաղաքականության վերաբերյալ: Առաջարկությունների փաթեթը 2009 թվականի մայիս ամսին ընդունվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից, հղումով, որ կօգտագործվի «Աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարության» եւ «Հակաճգնաժամային ծրագրի» սոցիալական աջակցության ենթաոլորտին վերաբերող առանձին հատվածներում:**

**Գործընթացը շարունակվում է եւ ՀԵՆԿ-ը հետեւողական է իր նախաձեռնության վերջնական արդյունքները կյանքի կոչելու՝ ի շահ սոցիալական աջակցության կարիք ունեցող քաղաքացիների:**

ՀԵՆԿ ՀԿ

AZG NEW 4.QXD 7/22/2009 9:00 PM Page 1



## Արձագանք

# Աժան յայտարարութիւններով հրապարակ մի՛ իջնէք

Հայրենի «Հրապարակ» օրաթերթի մէջ կարդացինք «թօշակառու լրագրող» Եւգենի Կուրղինեանի լոյս ընծայած «Ով վճարում է՝ նա էլ պատուիրում է» յօդուածը, ուր ան կը շօշափէ իր հասողութենէն վեր ազգային-եկեղեցական հարցեր, որոնցմէ ինք մղոններով հեռու կ՚ապրի: Ան կը փորձէ անդրադառնալ եւ իր «հեղինակաւոր» կարծիքը ներկայացնել քաղաքամայր Երեւանի մէջ տեղի ունեցող այն հիմնարկէքին, ուր պիտի բարձրանայ Ս. Աննա եկեղեցին ու կաթողիկոսարանի երեւանեան գրասենեակի շէնքը: Այս մեծածախս համալիրին բարերարն է ամերիկահայ ծանօթ ազգային Հրայր Յովնանեանը:

Դարերէ ի վեր մեր եկեղեցական թէ ազգային կառոյցները Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին բարձրացած են շնորհիւ հաւատացեալ ու կրթանուէր ազգայիններու: Եւ այս աւանդութիւնը ոչ միայն հայութեան համար իւրայատուկ երեւոյթ է, այլեւ բովանդակ քրիստոնեայ աշխարհին: Կաթոլիկ, Օրթոտոքս թէ Անկլիքան եկեղեցիները կառուցուած են, հակառակ այդ եկեղեցիներու ունեցած մեծագումար հարստութեանց, մի՛շտ ալ դիմելով գաղութներու մէջ հաւատացեալ հարուստ մեծատուններու եւ բարերարներու: Նոյնիսկ Սուրբ Քաղաքի՝ Երուսաղէմի մէջ մեր ունեցած կալուածներն ու եկեղեցական կառոյցները բարձրացած են այդ օրերու հայ ազնուականներուն իշխանական նուիրատուութիւններով: Գոնէ մեր պատմութիւնը արձանագրած է անունները այն բազմահարիւր կառոյցներուն, որոնց բարերարները եղած են թագաւորներ եւ իշխաններ:

Զարմանալի չէ, որ բարերարներ, երբ իրենց ողջութեան կը կատարեն նմանօրինակ մեծ նուիրաբերումներ, կը փափաքին անուանակոչել իրենց սիրեցեալներու անունով կամ՝ ծնողներու յիշատակը անմահացնելու մտքով: Ասիկա պարզ ու հասկնալի պէտք է ըլլայ բոլորին, նոյնիսկ «թօշակառու» ազնուափայլ յօդուածագիրին, որ հասակ առած ըլլալու է սովետական իշխանութեան օրերուն՝ տեսնելով իր շուրջբոլորը մեր հրապարակներն ու պողոտաները, որոնք անուանուած են Լենինի, Մարքսի կամ Շահումեանի ու Կամոյի անուններով:

Սակայն երբ ամբողջութեամբ ժողովրդային հանգանակութեամբ ազգային կառոյց մը կը բարձրանայ, ինչպէս է պարագան Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր եկեղեցիին, այն ատեն օրուան թեմակալ առաջնորդը իրաւո՛ւնքը ունի զայն մկրտելու ազգային հերոսի մը կամ սուրբի մը անունով: Սակայն այս պարագային հարցը կը տարբերի, որովհետեւ Սուրբ Աննայի անունով մկրտուելիք եկեղեցիին միա՛կ բարերարը պարոն Հրայր Յովնանեանն է:

Հիմա գանք յօդուածագիրին ունեցած եկեղեցական տգիտութեան, երբ գռեհկօրէն օրինակ կը բերէ ռուսական Նատաշա անունը կամ աժան լրագրական սրամտութեամբ մը կը գրէ. «Կամ էլ՝ ինչքան է բախտներս բերել, որ սփիւռքահայ բարերար Հրայր Յովնանեանի կնոջ անունը այն ժամանակների տարածուած անուններից չէ՝ ասենք, Վարդիշաղ կամ Թագագիւլ, թէ չէ Երեւանի կենտրոնում ունենալ Ս. Թագագիւլ եկեղեցի, այնքան էլ յարմար չէր լինի հաւատացեալ հայ ժողովրդի համար»:

Ըսենք, որ Մայր աթոռն ու անոր արժանաւոր գահակալը՝ մեր Վեհափառը լա՛ւ գիտէ, թէ Աննան եղած է մեր սուրբերու կարգին: Եթէ առիթ ունենաք այցելելու Ս. Էջմիածին, պիտի խնդրեմ, որ կարդաք Կ. Պոլսոյ պատրիարքներէն Շնորհք արք. Գալուստեանի սուրբերու նուիրած լուրջ ուսումնասիրութիւնը, ուր 137-րդ էջով երբ կը թուագրէ սուրբերու անունները, առաջին որպէս սուրբեր կ՚արձանագրէ Յովակիմ եւ Աննա, որոնք եղած են ծնողքը Աստուածամօր: *«Յովակիմ եւ Աննա Նոր Կտակարանի սուրբերուն կարգին անցած են լոկ Քրիստոսի նախածնողքը՝ այսինքն մեծ հայրը եւ մեծ մայրը եղած ըլլալնուն համար: Յովակիմ արդար, ուղիղ եւ աստուածավախ մարդ է եղած եւ Աննան բարեպաշտ՝ բայց ամուլ է եղած: Աստուծմէ խոստացուած զաւակ կ՚ունենայ: Ասիկա վկայութիւնն է Յակոբոս Տեառնեղբօր, որուն գերեզմանը կը հանգչի Երուսաղէմի Սուրբ Յակոբ Մայր տաճարին մէջ:*

*«Աննա յղացաւ ու ծնաւ հրեշտակային մանուկ մը, զոր կոչեց Մարիամ, որ կը նշանակէ լուսաւորեալ: Աննա տեսած, երջանկացած իր թոռնիկը, Յիսուս մանուկը, եւ կարճ ժամանակ մը յետոյ վախճանած է խաղաղութեամբ»:*

Հայ եկեղեցին ի պատիւ Յովակիմի եւ Աննայի գեղեցիկ շարականներ յօրինած է, որոնց մէջ կը հաստատուի, թէ այն օրհնութիւնը, որ Աստուծոյ կողմէ տրուեցաւ «աստուածացոյց արուաց եւ իգաց», լիովին իրականացաւ Յովակիմի եւ Աննայի վրայ: Կը յիշուի, որ Հին Ուխտի արքայական ու քահանայական գաւազանները միացան Յովակիմի եւ Աննայի վրայ, որոնց միակ պտուղը եղաւ Ս. Կոյսը: Ու կ՚եզրակացնէ շարականը.

*«Ի յամուլ երկրէ (Յովակիմէ եւ Աննայէ) այսօր բուսաւ մեզ*

*Բարեբեր բոյսն բարի. շուշան հովտաց, ծաղիկն դաշտաց.*

*Միամայրն Մարիամ, արմատ Տնկոյն անմահութեան:*

*Աղաչանօք սորա խնայեա ի մեզ»:*

Կամ, բարեպա՞շտ «թօշակառուիհ» Եւգենի, հաճէ կարդալ մեր Շարակնոցին էջ 17-ի վրայ «Կանոն Յովակիմայ եւ Աննայի ծնողաց սրբուհւոյ Աստուածածնին» շարականը: Ի՞նչ հարուստ է մեր եկեղեցին եւ, ինչպէս կը յիշես յօդուածիդ մէջ, այս անգամ դո՛ւն գնա ու քու աղանդաւոր բարեկամներուդ ջանայ համոզել, որ վերադառնան մայր եկեղեցին: Ի վերջոյ այդ նորաբոյս եւ օտարամուտ աղանդաւորական շարժումներու ետին կեցող մարդիկն են, որոնք մեր համեստ հաւատացեալներուն կը վճարեն ու կը պատուիրեն հեռու մնալ առաջին քրիստոնեայ մեր եկեղեցիէն:

Վերջապէս, ըսեմ նաեւ, որ Միացեալ Նահանգներու Իլլինոյ նահանգի Փալոս Հայթց քաղաքի հայոց եկեղեցին կը կոչուի Սրբոց Յովակիմ եւ Աննա հայաստանեայց եկեղեցի, որ ամերիկածին բարեպաշտ սերունդի ազգային, մշակութային եւ հոգեւոր կեդրոնն է:

Այսքանը՝ եկեղեցական հարցերու մասին:

Ու հիմա վերադառնանք այդ գրութեան ազգային պարունակին:

Պարոն Հրայր Յովնանեան եւ ընդհանրապէս Յովնանեան գերդաստանը ամերիկահայ կեանքի մէջ ազգապահպանման ծաւալուն աշխատանք տարած են: Տանք քանի մը օրինակներ այս ընտանիքին կատարած կարգ մը նուիրատուութիւններուն մասին.

Կառուցած են Նիւ Ջերզի նահանգի Էլպերոն քաղաքի մէջ Ս. Ստեփանոս եկեղեցին: Բարձրացուցած են Նիւ Ջերզի նահանգի միա՛կ հայկական դպրոցը՝ Յովնանեան ամենօրեայ վարժարանը, Նիւ Եորքի մէջ Հայաստանի Հանրապետութեան նուիրած են ՄԱԿ-ի մօտ ՀՀ դեսպանութեան շէնքը, որ առաջին արտասահմանեան կալուածն էր ՀՀ արտգործնախարարութեան: Դարձեալ, Հայաստանին նուիրած են Ուաշինկթընի մօտ ՀՀ դեսպանութեան շքեղ շէնքը: Ֆիլադելֆիոյ մէջ, Հռիփսիմեանց հայ քոյրերու վարժարանի կառուցման մասնակցած են մեծագումար նուիրատուութեամբ:

Սակայն չքաւարարուինք միայն նիւթական իրենց մասնակցութեամբ, որոնց շարքը պիտի երկարէր: Պարոն Հրայր Յովնանեան եղած է հիմնադիրներէն Ամերիկայի հայկական համագումարին (Արմինիըն Էսեմբլիին), որուն նախագահն է այսօր: Կ՚արժէ որ տիկին Կուրղինեան այցելէ համագումարի Երեւանի գրասենեակը եւ պատասխանատու տնօրէնուհի Արփի Վարդանեանէն իմանայ այս կազմակերպութեան Հայաստանի ու մեր արդար դատին համար կատարած աշխատանքներուն մասին: Եթէ այսօր տակաւին արթուն կը մնայ մեր Մեծ երազի հետապնդումը այս մեծ երկրին մէջ, ատիկա առաւելաբար կը պարտինք Ամերիկայի հայկական համագումարի ջանքերուն: Իր շուրջ բոլորած ամերիկահայ ծանօթ քաղաքական ազդեցիկ ու տիրական դէմքեր, բարերարներ ու գիտնականներ, անցնող մօտ 40 տարիներուն միլիոնաւոր դոլարներ հաւաքած է ի նպաստ Հայ դատին, Հայոց ցեղասպանութեան ճանաչումին ու ՀՀ անկախացումէն ետք ալ Հայաստանի օգնութեան աշխատանքներուն: Եթէ այսօր, ահա՛ 15 տարիներէ ի վեր ամերիկեան պետական օգնութիւն կը հոսի մեր այլապէս համեստ պետական պիւտճէին մէջ, այդ կու գայ առաւելաբար Էսեմբլիին կատարած լոբբիինգի լուրջ աշխատանքին շնորհիւ:

Ու դեռ, պարոն Հրայր Յովնանեանի մեծ եղբայրը՝ պարոն Գէորգ Յովնանեան, պատուական այդ հայը, որ կը գլխաւորէ մեր առաջնորդարանի Հայ օգնութեան ֆոնդը (ՀՕՖ), երկրաշարժէն ի վեր մինչեւ այսօր աւելի քան 300 միլիոն դոլարի մարդասիրական օժանդակութիւն բերած է Աղէտի գօտիին, Ղարաբաղին թէ կրթական ու բարեսիրական այլեւայլ նպատակներու համար: Ազգային որեւէ հաստատութիւն ցարդ նմանօրինակ օժանդակութիւն չէ բերած մեր հայրենիքին:

Յովնանեան եղբայրներ իրենց քսակը մնայուն կերպով բաց պահած են «Հայաստան» համահայկական հիմնադրամի նուիրահաւաքի աշխատանքներուն, Մայր աթոռի պայծառութեան թէ Հայաստանի գիտութիւններու ակադեմիային համար: Թուել պէտք չկայ մնացեալները:

Ու այս ձեր յօդուածը սփիւռքի մէջ կը տարածուի, ցաւօք սրտի, «ՀՌԱԿ-ի թիւ 171 հաղորդագրութիւն» վերտառութեան տակ եւ չար ձեռքեր կը տարածեն սփիւռքով մէկ:

Հայրենի ընթերցողներուն հասնելու նպատակով, այս առթիւ, կ՚ըսեմ ու կը հաստատեմ հոս, որ ՀՌԱԿ-ը ո՚չ մէկ օրգանական կամ օրինական կապ ունի աւանդական Ռամկավար Ազատական Կուսակցութեան հետ, հետեւաբար այդ կազմակերպութեան պատասխանատու պարոն Յարութ Առաքելեանի հաղորդագրութիւններն ու յայտարարութիւնները, մամլոյ տեսակցութիւններն ու ասուլիսները ոչ մէկ պաշտօնական բնոյթ կը ստանան եւ չեն կրնար ապակողմնորոշել ռամկավար ազատական շարքերը, մեզի բարեկամ կազմակերպութիւններու անդամները, առհասարակ սփիւռքահայ բազմահազար մեր ընթերցողները, եւ մանաւանդ Մայր աթոռը, ՀԲԸՄ-ը, Հայկական համագումարն ու մեր սիրելի բարերարները:

Բոլոր անոնք, որ աղանդամոլութեամբ կամ քաղաքական նեղ հաշիւներով անվայել արտայայտութիւններ կը յղեն Ամենայն հայոց հայրապետի հասցէին, պարզապէս ազգակործան տարրեր են, որոնց պիղծ թակարդին մէջ ինկածներէն մէկը կը թուիք ըլլալ, երբ մեր հայրապետին մասին կը գրէք հետեւեալը. «Սարսափելի է, երբ հոգեւորականի աչքերի մէջ նայելով՝ հասկանում եք, որ նա Աստծուն չի հաւատում՝ ինչպիսի համոզիչ առոգանութեամբ էլ հաւատացեալ ժողովրդի հետ հոգեւոր արժէքներից խօսի»: Եկեղեցական հարցերու ձեր տգիտութեամբ դուք իրաւունք չունիք հաւատաքննիչի դեր կատարելու:

Գարեգին Բ մեր մեծագործ հայրապետը, իր իշխանութեան այս կարճ ժամանակաշրջանին, Հայաստան աշխարհի, նախկին սովետական հանրապետութիւններու տարածքին թէ սփիւռքի ամենախուլ անկիւններու մէջ ամէնէն աւելի եկեղեցի, դպրոց ու համայնքային կեդրոն բարձրացնող կաթողիկոսն է եղած:

Ո՜չ, տիկին, դուք մեր Վեհափառը չէք ճանչցած:

Այս երեկոյ իսկ ժամ գացէք եւ մոմ վառեցէք Ս. Աննայի բարի յիշատակին եւ աղօթեցէք Վեհափառ հօր արեւշատութեան համար, խնդրելով Իրմէ ձեր յիմար մեղքերուն թողութիւն:

**ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ**
**Նիւ Եորք**

# Չեզոք ականատեսի վկայությունը Թարսուսի հայոց թաղամասի ոչնչացման մասին

## *Պատմում են հարյուր տարի առաջ գրված նամակները*

**«Ակօս», 2009 թ., 5 մայիսի**

Թեեւ հայերի ցեղասպանության մասին շատ վկայություններ են հրապարակվել (հազվադեպ նաեւ օտար միսիոներների կողմից), այնուամենայնիվ մենք բոլոր հայկական բնակավայրերում կատարված խժդժությունների մասին չունենք ամբողջական տեղեկություններ, որովհետեւ ոչնչացվել են հայերն ամբողջությամբ:

Ահա հարյուր տարի անց, Ամերիկայում լույս է տեսել մի գիրք՝ «Կարմիր կարպետներ» վերնագրով, որի հեղինակը Հելեն Դավենփորթ Գիբբոնսն է, նա Թարսուսի ամերիկյան քոլեջի ուսուցչուհին է եղել 1908-1919 թթ.: Քոլեջը, որ հայկական թաղամասում է գտնվել, հնարավորություն է տվել անմիջապես մոտիկից տեսնելու կատարվող գազանությունները եւ թարմ տպավորությունների ազդեցությամբ, մորը գրած նամակներում, պատմելու հայոց ջարդերի եւ քոլեջի աշխատողների կրած սարսափների մասին:

Թարսուսի հայ բնակչության կոտորածների մասին մենք չենք ունեցել վկայություններ, սա միակ չեզոք ականատեսի վկայությունն է, որ Թարսուսի հայոց ջարդը Ադանայի կոտորածների շարունակությունն է դիտում: Մենք միայն նշում ենք Ադանայի 30.000 հայերի ոչնչացման մասին, իսկ թե որքա՞ն հայ կար Թարսուսում եւ որքա՞նը կարողացավ փրկվել, մենք ստույգ տվյալներ չունենք: Ուրեմն 1909-ին Ադանայի ջարդերը միակը չեն եղել: Հելենը՝ երիտասարդ ուսուցչուհին, ԱՄՆ-ում գտնվող մորը շարունակ նամակներ է գրում Թարսուս քաղաքի իր առօրյա կյանքի եւ այն ամենի մասին, ինչ կարող էր հետաքրքրել իր մայրիկին: Ու հանկարծ խաղաղ կյանքի առօրյան արտացոլող էջերը լցվում են «դառը իրադարձությունների» նկարագրությամբ:

Հելենը եւ իր ամուսինը գրում են Ադանայի 30 հազար հայերի զանգվածային ոչնչացման մասին եւ ընդգծում են, որ դա կազմակերպված էր վերեւից...

Նա գունաթափված իր նամակների բովանդակությունը ցանկանում է պատմել գրքի ձեւով, սակայն գերադասում է թողնել նամակները նույնությամբ, որպեսզի դրանք խոսեն, իրենք պատմեն ահավոր իրադարձությունների մասին: Ամերիկացի մի կնոջ՝ ականատեսի պատմածներն ուրիշ ամերիկացի կանանց եւ տղամարդկանց է փոխանցում այդ սարսափելի օրերի իրադարձությունները: «Միաժամանակ, հայ բարեկամներին, սիրելի քրիստոնյաներին պաշտպան կանգնած ամերիկյան միսիոներների անձնուրացությունն ու հերոսությունն եմ ցանկանում ցուցադրել», ասում է նա:

Թարսուսի հայոց թաղամասն էլ Ադանայի հայոց բախտին արժանացավ: Քանի որ ամերիկյան քոլեջը գտնվում է Թարսուսի հայոց թաղամասում, ապա կատարվող դեպքերին անմիջապես ականատես են լինում աշխատակիցները՝ գտնվելով «հրացանի մի գնդակի հեռավորությամբ միայն զատված»:

Հելենը մայրիկին գրած նամակում, որ թվագրված է նիսան (ապրիլ) ամսի ջումա (ուրբաթ) օրը, պատմում է այսպես. «Կեսօրվա մոտերքը Ժաննայի եւ Հենրիխի աշխատատեղերի սենյակներին շատ մոտիկ գտնվող մի տան վրա տեսանք հարձակում: Սկզբում թեթեւ մի մռմունջի ձայն էր գալիս, հետեւից՝ հռնդյուն, 25 բաշիբոզուկներ Թարսուսի ամենահարուստ մարդու տան պատշգամբը, երկրորդ հարկ մագլցեցին, մի մարդ մտավ տուն: Լսվեցին զենքի ձայներ, բացականչություններ իրար խառնված: Քիչ հետո լուսամուտից դուրս այրվող թղթի կտորներ թռան, որին հետեւեցին կապույտ ու կարմիր կրակի բոցերը: Ամեն ինչ ընթանում էր մշակված օրինաչափությամբ՝ կողոպուտ, հանցագործություն (սպանություն), հրդեհ: Երեկո էր, եւ քանի որ մենք շատ մոտ էինք, նկատում էինք ամեն մանրուք:

Արդեն գիշեր էր, ամբողջ երկինքը կարմրել էր կրակից: Այրվում էր ամբողջ հայկական թաղամասը:

Գնալով վատանում էր մեր վիճակը: Հրդեհը մեզ էր մոտենում: Գրոհողների զայրույթը կարող էր ուղղվել մեր կողմը: 400-ից ավելի փախստականների էինք թաքցնում տնքացող սարսափի մեջ: Մեզ բաժանողը մի գնդակի տարածություն էր»:

Այս գիրքը կարեւոր է երկու առումով, նախ՝ այն տեսակետով, որ չենք ունեցել ինֆորմացիա 1909-ին Ադանայից բացի եւ այլ վայրերի կոտորածների մասին, այս գիրքը գալիս է լրացնելու այդ բացը, եւ երկրորդ՝ որ չեզոք այլազգի ականատեսն է պատմում հայոց թաղամասի ոչնչացման իրողությունը:

Կարեւոր է նաեւ մի եզրակացություն, որ Ադանայի 1909 թ. (նաեւ Թարսուսի) կոտորածները 1915-ի նախերգանքն էին՝ փորձնական կոտորածների իրագործում բաշիբոզուկների մասնակցությամբ:

**ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ**
**դոկտոր, պրոֆեսոր**

AZG NEW 5.QXD 7/22/2009 9:01 PM Page 1



# Չինաստանը պետք է հակադարձի Թուրքիային

***Ույղուր-չինական վերջերս պատահած բախումների թուրքական արձագանքներին է անդրադառնում «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը: Ստորեւ թարգմանաբար նրա հոդվածը՝ որոշ հապավումներով:***

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը վերջերս կարծես վատ սովորություն է ձեռք բերել ժամանակ առ ժամանակ քննադատելու տարբեր երկրների ղեկավարներին ցեղասպանություն գործելու առնչությամբ: Նման քայլերով Թուրքիայի կառավարության առաջնորդը անփութորեն նոր հնարավորություն է ստեղծում միջազգային լրատվության միջոցների համար, որպեսզի վերջիններս դարձյալ առաջ քաշեն հայերի ցեղասպանության հարցը:

Այս տարվա հունվարին Թուրքիայի վարչապետը Իսրայելին մեղադրեց Գազայի վրա հարձակման ժամանակ ցեղասպանություն գործած լինելու մեջ: Իսրայելի առաջնորդներից եւ լրատվամիջոցներից ոմանք հակադարձեցին նրան՝ ասելով, որ Թուրքիան վերջինը պետք է խոսի ցեղասպանության մասին, քանի որ երկիրը մեղավոր է հայերի ցեղասպանությունը գործելու մեջ: Իսրայելի կառավարության որոշ անդամներ այնքան էին զայրացել եւ վիրավորվել, որ սպառնացին հակադարձել Թուրքիային՝ ճանաչելով հայերի ցեղասպանությունը:

Այս ամսվա սկզբներին Էրդողանը վերադարձավ իր սիրելի թեմային, այս անգամ Չինաստանին մեղադրելով ցեղասպանություն գործելու մեջ: Նա զայրացած էր, որ մի քանի տասնյակ թյուրքախոս մահմեդական ույղուրներ սպանվել էին Սինցզյան ինքնավար շրջանում հան չինացիների հետ բախումների ընթացքում: Վերջիններս ավելի շատ էին տուժել:

Ըստ Ռոյթերի լրատվության, Էրդողանը հուլիսի 10-ին ասել է. «Իրադարձությունները Չինաստանում, պարզ ասած, ցեղասպանություն են: Այլ կերպ մեկնաբանել դրանք անիմաստ է»: Էրդողանի անխոհեմ խոսքերն անմիջապես հակադարձ վերաբերմունք առաջացրին միջազգային լրատվության շրջանակներում: Նրանք ցույց տվեցին ուրիշներին ցեղասպանության մեջ մեղադրելու նրա անմտությունը այն դեպքում, երբ իր երկիրն է պատասխանատու հայերի ցեղասպանության եւ ընդհանրապես փոքրամասնությունների իրավունքները ոտնահարելու երկար տարեգրություն ունենալու հարցերում:

Անգլիական «Էկոնոմիստ» շաբաթաթերթը հաղորդեց, որ «անցյալ մի քանի օրերի ընթացքում Չինաստանի ինտերնետային ֆորումներն իրենց ձայնն են բարձրացրել ի պաշտպանություն քուրդ անջատողականների», մի թեմա, որ գործնականում չէր շոշափվել Չինաստանում մինչեւ Էրդողանի մեղադրական խոսքերը ցեղասպանության վերաբերյալ: Պարբերականը ավելացրել էր, որ «Թուրքիան իրեն դրել է կրակի գծի վրա»:

«Ասոշիեյթեդ պրես» գործակալությունը՝ լուսաբանելով Էրդողանի բնորոշումները, մի ամբողջ պարբերություն էր հատկացրել Հայոց ցեղասպանությանը: «Թուրքիան ինքը չափազանց զգայուն է «ցեղասպանություն» եզրը օգտագործելու հարցում: Հայերն ասում են, որ 1,5 միլիոն հայեր են կոտորվել օսմանյան թուրքերի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ իրականացվել է, հայերի եւ մի շարք այլ երկրների ժողովուրդների համոզմամբ, 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը»:

Ռոյթերի լրատվության մեջ նշվում էր, որ «Ցեղասպանության պիտակը մասնավորապես զգայուն է Թուրքիայում, որը կտրականապես ժխտում է հայկական պնդումները, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան թուրքերի կողմից հայերի կոտորածները ցեղասպանություն էին»:

Հոնկոնգի Asia Sentinel պարբերականի սյունակագիր Սիլվիա Հուին նշավակել է Էրդողանին՝ ցեղասպանության եզրի անհարկի օգտագործման համար: Նա գրել է. «Այս մեղադրանքի վերաբերյալ հետաքրքրականն այն չէ միայն, որ չափազանց պատահական եւ տհաս ձեւով է հնչել (հատկապես հաշվի առնելով, թե ինչքան զգայուն է Թուրքիան այդ բառի նկատմամբ), այլեւ այն, որ ինչքանով է հակասում միեւնույն առիթով Էրդողանի արտասանած այլ մտքերին... Ամեն դեպքում, թուրք առաջնորդը ներկայանում է որպես ամբողջովին երկերեսանի մի անձնավորություն կամ էլ այնքան տարված տեղացի ույղուրներին հաճոյանալու մոլուցքով, որ երկար չի մտածել նման լուրջ հայտարարություն անելուց առաջ»:

Թուրքական «Ռադիկալ» ազատական թերթը, միանալով աղմկահարույց բանավեճին, մեջ է բերել Բոստոնում լույս տեսնող «Արմինյն ուիքլի» շաբաթաթերթի խմբագրականից մի հատված, որտեղ նշվում է. «Ապակե տնակներում ապրողները պետք է զգուշանան քարեր շպրտելուց»: Խմբագրականը կշտամբել է Էրդողանին, որ «համարձակվել է մի քանի տասնյակ ույղուրների սպանությունը համարել ցեղասպանություն, երբ երկիրը միլիոններ է ծախսում ժխտելու 1,5 միլիոն հայերի կոտորածը»:

Զարմանալի չէ, որ Չինաստանի պետական լրատվամիջոցները առավել քննադատական վերաբերմունք են ցուցաբերել Էրդողանի նկատմամբ: «Փիփլզ դեյլի» թերթը հուլիսի 14-ին գրել է. «Շատ չինացի քաղաքացիներ վիրավորված են զգում թուրքական գործողություններից եւ առաջարկում են, որ Չինաստանը փոխի իր վերաբերմունքը PKK-ի նկատմամբ եւ պաշտպանի վերջինիս անկախության ձգտումը, որպեսզի Թուրքիան ծանր քաղաքական գին վճարի իր արարքների համար: Արեւմուտքը մի ժամանակ մեղադրում էր Թուրքիային՝ Հայաստանում ցեղասպանություն գործած լինելու համար: Քուրդիստանի աշխատավորների կուսակցության վրա հարձակումները նույնպես մի շարք բանավեճերի առիթ են տվել»: Թերթը տվել է նաեւ Թուրքիայի հասցեին մի քանի քննադատական նամակներ, որոնցից մեկում նշվում է. «Քրդերի կոտորածները Թուրքիայում ցեղասպանության եւ նացիզմի նման բաներ են: Չինաստանին ցեղասպանություն վերագրելը նման է այն գողին, որ գոռում է՝ «Բռնեցե՛ք գողին»:

Մեկ ուրիշ չինական թերթ՝ «Չայնա դեյլին» «Փաստերը մի խեղաթյուրեք» վերնագրված խմբագրականում Էրդողանից պահանջում է «Հետ վերցնել իր խոսքերը... որոնք Չինաստանի ներքին գործերին խառնվելու նշանակություն ունեն»:

Իսկ ամենաարդյունավետ միջոցը, որով Չինաստանը կարող է պատասխանել Էրդողանի մեղադրանքներին, խորհրդարանում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու բանաձեւի ընդունումը կլինի:

**Թարգմ. Հ. Ծ.**

# «Աղեսի» հիշատակումները կհանվեն իսրայելական դասագրքերից

Պաղեստինյան «Աղեսին» վերաբերող բոլոր հիշատակումները կհանվեն արաբների համար նախատեսված իսրայելական դասագրքերից: Այդ մասին հաղորդում է Ֆրանս պրես գործակալությունը՝ վկայակոչելով Իսրայելի կրթության նախարար Գեդեոն Սաարին:

Արաբական աշխարհում «Աղես» ասելով, հասկանում են 1948 թ. իսրայելական պետության ստեղծումը:

Սաարը հայտարարել է. «Որեւէ հիմք չկա, որ Իսրայելի պետության հռչակումը պաշտոնական դպրոցական ծրագրում ներկայացվի որպես «աղես»: Պետական կրթության համակարգը չի կարող կասկածի տակ առնել իսրայելական պետականության օրինականությունը եւ առավել եւս ծայրահեղական տրամադրություններ հրահրել արաբական ծագումով իսրայելցիների մեջ»:

Նախարարի խոսքերով, արդեն մշակված է օրինագիծ, որն արգելում է Իսրայելում արաբերենով լույս տեսնող դասագրքերում «Աղեսի» որեւէ հիշատակում: Օրինագիծը նաեւ նախատեսում է «Աղեսի» հետ կապված միջոցառումների պետական ֆինանսավորման արգելում:

Ամեն տարի մայիսի 15-ին պաղեստինցիները (այդ թվում Իսրայելում ապրողները) զանազան հանրահավաքներ են անցկացնում ի հիշատակ 1948 թ. դեպքերի, երբ 700 հազար պաղեստինցիներ ստիպված լքեցին իրենց տները եւ դարձան գաղթական:

Իսրայելում ներկայումս ապրում են մոտ 1,2 մլն արաբներ: Երկրի ամբողջ բնակչությունը մոտավորապես 7 միլիոն է:

# Շրի Լանկան ԱՄՀ-ից կստանա 2,5 մլրդ դոլար

Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) նախնական համաձայնագիր է ստորագրել Շրի Լանկային 2,5 մլրդ դոլար պահուստային վարկի հատկացման վերաբերյալ: ԱՄՀ հաղորդագրության մեջ նշվում է, որ այդ գումարը հիմնադրամում քառակի գերազանցում է Շրի Լանկայի քվոտան:

Հիշյալ վարկը ստանալու համար Շրի Լանկան կարող է ԱՄՆ-ին դիմել վերջնական որոշման ընդունումից հետո 20 ամսվա ընթացքում: Վարկի առաջին բաժինը կկազմի 313 մլն դոլար:

Քաղաքացիական պատերազմից հետո Շրի Լանկան հայտնվել է ֆինանսական սուր ճգնաժամի մեջ: Վարկի հատկացումը ձգձգվեց, քանի որ խոչընդոտներ էին հարուցում Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը եւ մի շարք այլ երկրներ, որոնք պահանջում էին քննել «Թամիլ Իլամի ազատագրման վագրեր» խմբավորման դեմ կառավարական զորքերի գործողության ժամանակ կատարված պատերազմական հանցագործությունները: Եվ ԱՄՀ-ն հետաձգել էր վարկի հատկացման շուրջն ապրիլին ձեռք բերված համաձայնության քննարկումը:

Մայիսի 18-ին Կոլումբիայի իշխանությունները պաշտոնապես հայտարարել էին թամիլ ապստամբների դեմ ռազմական գործողության ավարտի մասին: Հունվարին սկսված այդ գործողության ընթացքում զոհվեց ավելի քան 6 հազար խաղաղ բնակիչ, 200 հազար մարդ դարձավ գաղթական:

ԿԻԵՎ

# Բայդեն. «ԱՄՆ-ՌԴ մերձեցումը չի կատարվի Ուկրաինայի հաշվին»



**ԱՄՆ փոխնախագահ Ջո Բայդենը խոսացել է, որ երկիրը Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավում կիրականացնի, բայց ոչ Ուկրաինայի հաշվին: Բայդենն այդ հայտարարությունն արել է Կիեւում, Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոյի հետ իր բանակցությունների ավարտից հետո, հաղորդում է Ֆրանս պրես գործակալությունը:**

**Բացի դրանից, փոխնախագահը Յուշչենկոյին խոսացել է, որ ինքը եւ նախագահ Բարաք Օբաման կոժանդակեն Ուկրաինայի եվրատլանտյան ձգտումներին:**

**Ընդսմին Ջո Բայդենն ավելացրել է, որ ԱՄՆ-ը ուրախ կլինի Ուկրաինային տեսնելու ՆԱՏՕ-ում, «եթե ուկրաինացիները նման ցանկություն արտահայտեն»:**

**Ի պատասխան՝ Յուշչենկոն հայտարարել է, որ ինքը պատրաստ է իր ամերիկացի պաշտոնակցին Կիեւում ընդունել «նրան հարմար որեւէ պահի»:**

**Սպասվում է, որ Յուշչենկոյի հետ հանդիպում ունենալուց հետո Ջո Բայդենը կհանդիպի ուկրաինացի նաեւ ուրիշ քաղաքական գործիչների հետ: Մասնավորապես նախատեսված են բանակցություններ վարչապետ Յուլյա Տիմոշենկոյի, ընդդիմության առաջնորդ Վիկտոր Յանուկովիչի, խորհրդարանի ներկայիս եւ նախկին նախագահներ Լիտվինի եւ Յացենյուկի հետ:**

# Ռուս-չինական զորավարժություններ



**Խաբարովսկում հուլիսի 22-ին սկսվել են ռուս-չինական հակաահաբեկչական զորավարժություններ «Խաղաղ առաքելություն-2009» պայմանական անունով: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը:**

**Զորավարժությունները Խաբարովսկում սկսվել են ռազմաքաղաքական խորհրդակցությամբ: Այնուհետեւ Չինաստանի հյուսիս-արեւելքում գտնվող Բայչեն քաղաքի մոտ՝ Տաոնան Շենյանի զինվորական օկրուգի զինափորձարանում մշակվել են ռուսական եւ չինական զորքերի համատեղ քայլեր պայմանական հակաահաբեկչական գործողության ժամանակ:**

**Ինտերֆաքսի տվյալներով, զորավարժությունները պետք է ավարտվեն հուլիսի 26-ին: «Խաղաղ առաքելություն-2009»-ին երկու կողմերից մասնակցում են մոտ 3 հազար զինծառայող, ավելի քան 300 միավոր զամաքային մարտական տեխնիկա, 45 օդանավ եւ ուղղաթիռ: Մասնավորապես ռուսական օդուժը կներկայացնեն 22 ինքնաթիռ եւ ուղղաթիռ, այդ թվում՝ «Իլ-76» ռազմափոխադրական օդանավեր, «Սու-24» ռմբակոծիչներ, «Սու-25» գրոհային օդանավեր, «Սու-27» կործանիչներ եւ «Մի-8» ուղղաթիռներ:**

**ՌԴ օդուժի գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Նիկոլայ Մակարովը մամլո ասուլիսում պարզաբանել է, որ զորավարժությունների գլխավոր խնդիրներից են զորքերի ընդհանուր խմբավորման ստեղծումը եւ «այդ խմբավորման կառավարման փոխարինելիության ապահովումը»:**

**Իր հերթին ՉԺՀ բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Չեն Բինդեն ընդգծել է, որ զորավարժություններն ուղղված չեն երրորդ երկրների դեմ:**

# Կալիֆոռնիայի բյուջեի առողջացման միջոցառումներ

Նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերը եւ Կալիֆոռնիայի օրենսդիրները համաձայնության են եկել նահանգի բյուջեի պակասորդի հաղթահարման միջոցառումների շուրջը: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ պակասորդը 26 մլրդ դոլարից ավելի է: «**Ազգը**» գրել է, որ հուլիսի սկզբներից նահանգում հայտարարված է արտակարգ ֆինանսական դրություն:

«Փրկության ծրագիրը» դռնփակ քննարկվել է հինգ ժամից ավելի: Մանրամասնությունները չեն հրապարակվում, բայց որոշ տվյալներ այնուամենայնիվ հայտնի են դարձել լրատվամիջոցներին: Մասնավորապես հայտնի է, որ նահանգապետը եւ իր հանրապետական ընկերները սկզբում կտրականապես դեմ են եղել հարկերի բարձրացմանը, իսկ դեմոկրատականները պահանջել են չկրճատել սոցիալական հատկացումների ծախսերը: Ի վերջո կողմերը հասել են փոխզիջման:

Ըստ նոր ծրագրի, 6 մլրդ դոլարով կրճատվում է դպրոցների եւ երկամյա քոլեջների ֆինանսավորումը: 3 միլիարդով՝ Կալիֆոռնիա նահանգի համալսարանի եւ Կալիֆոռնիայի համալսարանի ֆինանսավորումը: 1,2 միլիարդով՝ բանտերի համակարգինը: 1,3 մլրդ դոլար պակաս կստանա աղքատների բուժապահովագրման Medical ծրագիրը:

AZG NEW 6.QXD 7/22/2009 10:31 PM Page 1



# Ստեփանակերտի թատրոնը պետության աջակցության կարիքն է զգում



Վահրամ Փափազյանի անվան թատրոնը Ստեփանակերտի եզակի շինություններից է, որ Արցախյան պատերազմի ժամանակ չվնասվեց: Ասում են 1932-ին հիմնադրված թատրոնը կառուցվել է ավերված եկեղեցու փլատակների վրա: Ստեփանակերտում համոզված են, որ երկնային ուժն է պաշտպանել թատրոնի շենքը արկերից:

«Երեկոյան արկերի ձայնը չէր դադարում: Առավոտյան շրջակա մի քանի տուն ավերվել էր, բայց թատրոնի շենքը չէր վնասվել: Հրաշք էր, գուցե հիմա դա ոչինչ չնշանակի, կմտածեք՝ ընդամենը թատրոնի շենք է: Այն էլ պատերազմի ժամանակ, երբ օրական հարյուրավոր շինություններ էին պայթեցվում, հազարավոր մարդիկ էին մահանում, սակայն թատրոնի դերն անգամ այդ տարիներին չափազանց կարեւոր էր», - պատմում է Ստեփանակերտի բնակչուհի տիկին **Ժենյան**:

Ասում են շենքի ճարտարապետը կին է եղել: Թատրոնի նախագիծը, կահավորանքն ու զարդանախշերը նրբաճաշակ են: Թատրոնի բեմն ու օթյակները տպավորություն են ստեղծում, թե գտնվում ես ֆրանսիական կամ իտալական հայտնի թատրոնում, այն տարբերությամբ, որ նրանք լավ կահավորված ու վերանորոգված են: «Անգամ Երեւանից եկողները հիանում են ճարտարապետական այս գեղեցկությամբ: Ասում ենք շինությունը կնոջ գեղեցկություն եւ տղամարդու առնականություն ունի», նկատում է **Վլադիմիր** պապիկը, որ նույնպես Ստեփանակերտի բնակիչ է:

«Քանի սերունդ է դաստիարակվել թատրոնի շնորհիվ: Խորհրդային տարիներին թատրոնն էր հայապահպանության հիմնական օջախը: Հեռուստահաղորդումներն ու ռադիոծրագրերը հիմնականում թուրքերեն էին: Հայաստանից գրականություն, թերթեր այնքան էլ հաճախ չէին ստացվում: Թատրոնն էր համարվում քաղաքի ոգին: Դերասանները ամենանշանավոր մարդիկ էին», - ասում է թատրոնի տնօրեն **Կոմիտաս Դանիելյանը**:

77-ամյա կենսագրություն ունեցող թատրոնի խնդիրները, ցավոք, բազմաթիվ են: Ստեփանակերտի «գեղեցկուհին» անմխիթար վիճակում է հայտնվել. վերջին անգամ վերանորոգվել է 30 տարի առաջ: «Նստարանների սպունգը մաշվել է: Կոյուղին, ջրագծերը, էլեկտրագծերը լրովին փոխելու կարիք կա: Տանիքը կաթում է: Շենքը չի ջեռուցվում: Դերասանական կազմը վեց ամիս մատնված է հարկադիր պարապուրդի: Թատերական կյանքը Ստեփանակերտում սկսվում է մայիս ամսվանից շարունակվում մինչեւ նոյեմբեր: Ձմռանը փորձասենյակները տաքացնում ենք փայտի վառարաններով ու դերասանները դողացնելով փորձ են անում», - թատրոնի անմխիթար առօրյան է ներկայացնում Կոմիտաս Դանիելյանը:

Դերասանական կազմն այնքան էլ մեծ չէ. գլխավոր խնդիրը երիտասարդ, շնորհալի դերասաններ գտնելն է: «Նոր դերասաններ չկան: Երեւանում սովորողները Ստեփանակերտ չեն վերադառնում: Երիտասարդներն այս պայմաններում չեն ցանկանում աշխատել, պատմում է տնօրենը ու հավելում, այժմ թատրոնի դերասանական կազմը լրացնում են ոչ պրոֆեսիոնալ, երիտասարդ դերասանները: Պրոֆեսիոնալ դերասաններ ունենք, որ նախընտրում են ճաշարանում, խանութում աշխատել, բայց հրաժարվում են թատրոնում չնչին գումարով աշխատել»:

Գարնանային թատերաշրջանը կարելի է համարել հաջողված. բեմադրել են 3 պիես՝ Գրիգոր Գրիգորյանի «Զգուշացեք, նա դեռ կա», Հայկ Հակոբյանի «Սերը ճամփեզրին» եւ «Իմ զոքանչը» վոդեւիլը: Թատրոնի տնօրենը հանդիսատեսից դժգոհ չէ: «Եթե ներկայացումը որակով է՝ գալիս են: Եթե հանդիսատեսը քիչ է լինում, դերասաններին, ռեժիսորներին ասում եմ՝ մեղավորությունը փնտրեք ձեր աշխատանքում»:

Երեւան-Ստեփանակերտ թատերական կապն ամրապնդելու նպատակով այս տարի ներկայացումներով Ստեփանակերտ էին այցելել Երեւանի Համազգային եւ Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան թատրոնների դերասանները. Ստեփանակերտի թատրոնը փոխադարձ այցելություններ կազմակերպելու համար ֆինանսական հնարավորություններ չունի: «Համապատասխան ուշադրություն մշակութային ոլորտին չի տրամադրվում: Տարին մեկ նախարար է փոխվում (Օրինաչափություն է, թե պատահականություն, սակայն մշակույթի երեք նախարարներն էլ եղել են կին ու կրել Նարինե անունը: Ստեփանակերտում զվարճալի անեկդոտ կա՝ եթե աղջիկ ծնվի, անունը Նարինե դիր, կապ չունի մշակույթ կսիրի, թե ոչ: Միեւնույն է՝ մեծանա, մշակույթի նախարար կդառնա-Հ.Հ.): Այստեղից կարելի է եզրակացնել, որ մշակութային հստակ քաղաքականություն չկա», դժգոհեց Կոմիտաս Դանիելյանը:

Բարերարներին երբեւէ չեն դիմել, սակայն դրա կարիքը չկա: Թատրոնի տնօրենը նկատում է, որ իրենց պետությունը բազմաթիվ խնդիրներ ունի, որ կարող են լուծել բարերարները: Իսկ թատրոնի հարցը պետք է կարգավորվի միայն պետական մակարդակով: Ցավոք, այն ուշանում է...

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստեփանակերտ-Երեւան

# Վիմ Վենդերսը կնկարահանի ֆիլմ Պինե Բաուշի մասին



Հայտնի գերմանացի ռեժիսոր Վիմ Վենդերսը վերջերս հաստատել է իր մտադրությունը նկարահանել ֆիլմ ժամանակակից նշանավոր պարուհի Պինե Բաուշի մասին: Ինչպես տեղեկացնում է AFP գործակալությունը, ֆիլմի նկարահանումները վաղուց էին ընթանում, սակայն Բաուշի անսպասելի մահը ցնցեց բոլորին, այդ թվում ռեժիսորին եւ նկարահանման աշխատանքները ժամանակավորապես դադարեցին:

Վենդերսը նշել է, որ ֆիլմի նախնական տարբերակը փոփոխվել է, սակայն հիմքում շարունակելու է մնալ Բաուշի պարարվեստի փառաբանումը: «Բաուշի ստուդիան շարունակում է աշխատել: Նրա պարողները կշարունակեն ներկայացնել նրա պարային հանճարեղ բեմադրությունները՝ ոգեշնչելով իրենց արվեստի սիրահարներին», ասել է Վենդերսը:

Պինե Բաուշը մահացել է այս տարի հունիսի 30-ին: Կարիերան սկսել է նախ Գերմանիայում, այնուհետեւ շարունակել ԱՄՆ-ում: 1972-ից գլխավորում էր Վուպերտալի պարային թատրոնը: Ժամանակակից պարարվեստում մի շարք նոր հայտնագործությունների համար Բաուշն արժանացել է եվրոպական բազմաթիվ հեղինակավոր մրցանակների:

Հուլիս ամսին Բաուշը ծրագրել էր Մոսկվայի Չեխովի անվան թատերական փառատոնին ներկայացնել Բերտոլտ Բրեխտի «Յոթ մահացու մեղքեր» ներկայացումը:

Հ. Հ.

«ԱՐԻ ՏՈՒՆ»

# Հայրենագիտության դասընթացներ սփյուռքից ժամանած երեխաների համար

**«Ազգը»** անդրադարձել էր «Արի տուն» ծրագրով Հայաստան ժամանած սփյուռքահայ երիտասարդների առօրյային: Հուլիսի 21-ից թիվ 168 դպրոցում սկսվեց «Հայրենագիտություն» առարկայի դասընթացը, որը կտեւի 6 օր, երկուական ժամով: Առարկան դասավանդում էին հասուկ վերապատրաստում անցած մանկավարժներ Աննա Գիլավյանը եւ Նաիրա Գեւորգյանը: Դասի ընթացքում ներկայացվեցին հայոց լեզվի պատմության փուլերը՝ գրաբար, միջին հայերեն եւ աշխարհաբարի արեւելահայերեն եւ արեւմտահայերեն տարբերակները: Սփյուռքահայ պատանիները ակտիվություն ցուցաբերեցին հատկապես այն ժամանակ, երբ ուսուցիչը սկսեց պատմել աշխարհաբար հայերենի եւ նրա հիմնադիր Խաչատուր Աբովյանի մասին: Իսկ արեւմտահայերենի մասին խոսելիս, տիկին Գիլավյանը ընթերցեց Վահան Թեքեյանի, Միսաք Մեծարենցի, Պետրոս Դուրյանի բանաստեղծություններից: Ոգեւորիչ էր, երբ բոլորը միաձայն արտասանեցին Սիլվա Կապուտիկյանի «Պատգամ որդուս» բանաստեղծությունը:

Այնուհետեւ դպրոցի դահլիճում նրանց համար ցուցադրվեց Վազգեն Առաջին կաթողիկոսի մասին պատմող տեսաֆիլմը:

Հետաքրքրական եւ ուշագրավ էր սփյուռքահայ երեխաների այցը Մատենադարան, որտեղ նրանք ծանոթացան հին ձեռագրերին, դրանց պատմությանը ու որսացին ուղեկցորդի բոլոր բացատրությունները ու մեկնաբանությունները, հպարտանալով, որ ունեն հարուստ մշակույթ ու գրականություն:

Պատմական փաստ կարելի էր համարել պատանիների հանդիպումը խաչքարագործ Վարազդատ Համբարձումյանի ու գուսան Հայկազունու հետ: Խաչքարերի ստեղծման գաղտնիքներին ականատես, գուսանի ազգագրական երգերի ներքո պարելով եւ ոգեշնչվելով «Արի տուն» ծրագրի առաջին ծիծեռնակները ուղեւորվեցին Երեւանի թիվ 78 դպրոց՝ մասնակցելու «Պարենք հայկական պարեր» ծրագրի դասընթացներին:

Հաջորդ օրը նրանք այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ծաղիկներ դրեցին Ցեղասպանության զոհերի հուշակոթողին, այցելեցին թանգարան:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Տոն՝ Հայաստանի պետական կամերային նվագախմբից

Երեւանում երկամսյա տոն կլինի՝ հուլիսի 30-ին կսկսվի ու մինչեւ սեպտեմբերի 21-ը կտեւի Բաց երաժշտության փառատոնը, որի ընթացքում յուրաքանչյուր երեկո Երեւանը հագեցած կլինի բազմաժանր բարձրակարգ երաժշտության հնչյուններով: Փառատոնին մասնակցելու են հայ եւ այլազգի մենակատարներ, նվագախմբեր Հայաստանից ու այլ երկրներից: Կազմակերպիչների վստահեցմամբ՝ Բաց երաժշտության փառատոնը ծավալով, համերգային ծրագրերով ու բազմաժանրությամբ Հայաստանում աննախադեպ է: Փառատոնի նախաձեռնողը Հայաստանի պետական կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար Արամ Ղարաբեկյանն է, հովանավորները՝ Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպանությունը, ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը, «Կոնվերս բանկը», Ջինիշյան հիմնադրամը:

## Սարգիս Մուրադյանի ստեղծագործական ուղու ամփոփումն ալբոմով

«Սարգիս Մուրադյան» ալբոմի շնորհանդեսը տեղի կունենա վաղը Ազգային պատկերասրահի Որմնանկարների սրահում, որին զուգահեռ կընթանա նկարչի ճամփորդական էտյուդների ցուցահանդեսը: Ալբոմն ամփոփումն է Հայաստանի ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանի (1927-2007) ստեղծագործական ուղու: Այն ընդգրկում է 1952-ից մինչեւ 2003 թվականը ներառող 76 գեղանկարչական, 17 գրաֆիկական աշխատանքների եւ Պարույր Սեւակի տուն-թանգարանի (Զանգակատուն) պատը զարդարող մեծադիր որմնանկարի (2-3 x 22 մ) որակյալ լուսանկարները, Լիլիթ Սարգսյանի հեղինակած ներածական հոդվածը՝ հայերեն եւ անգլերեն լեզուներով, լուսանկարների ցանկը եւ կյանքի տարեգրությունը՝ նույնպես երկու լեզուներով, ինչպես նաեւ նկարչի ստեղծագործությանը նվիրված հրապարակումների համառոտ մատենագիտություն: Գրքի մակետի եւ ձեւավորման հեղինակն է Վահան Քոչարը, իսկ տպագրվել է «Անտարես» հրատարակչությունում ընտանիքի միջոցներով: Ալբոմը կազմել են Գոհար եւ Զարուհի Մուրադյանները:

## Ի պահպանություն հայկական տպագրության ավանդույթների

Մայիսին ամփոփվել են հանրապետական երկրորդ «Հրատարակչական արվեստ» մրցույթի արդյունքները, իսկ երեկ հաղթողներին դիպլոմներ են շնորհվել մշակույթի նախարարությունում: Մշակույթի նախարարության գրահրատարակչական գործի գործակալության ղեկավար **Էդվարդ Միլիտոնյանը** մրցույթի արդյունքները համարել է Հայաստանում հրատարակչական գործի արագ զարգացման ապացույց ու տեղեկացրել, որ ներկայացված 32 գրքերից 21-ը 7 անվանակարգերում հաղթող են ճանաչվել:

Միլիտոնյանի համոզմամբ, մրցույթի նպատակը գրահրատարակչության որակի բարձրացումն է, գրքարվեստի զարգացումը եւ հրատարակիչների միջեւ համագործակցությանը նպաստելը: Մշակույթի փոխնախարար **Դավիթ Մուրադյանն** էլ ընդգծել է, որ մրցույթին կհաջորդի հայկական տպագրության 500-ամյակի նշումը 2012 թվականին, ինչը պարտավորեցնում է եթե ոչ զարգացնել, ապա գոնե պահպանել հայ տպագրության հարուստ ավանդույթները:

## Սիրիայի նախագահը կատարել է հայ աղջնակին տված խոստումը

Սուրբ Հարության տոնի նախօրեին Սիրիայի նախագահ Բաշար Ասադը տիկնոջ հետ եղել է Սիրիայի օգնության խաչ կազմակերպության պատսպարանում:

Երկու ժամ շրջելուց եւ սաների հետ զրուցելուց հետո նախագահը մեկ օր անց Դամասկոսի իր նստավայրում կազմակերպությանը տրամադրել է 10 հազար դոլար: Իսկ օրերս կատարել է այցի ընթացքում Սիրիայի օգնության խաչի սաներից մեկին տված խոստումը՝ Ֆրանսիայի համալսարաններից մեկն ընդունվելու դեպքում ուսման ծախսերը հոգալու մասին:

Հալեպի պատսպարանի հոգաբարձությունը 1935 թվականից հանձնվել է Սիրիայի օգնության խաչին: Կազմակերպությունը մեծ նպաստ է բերել սիրիահայ գաղութի սոցիալական կարիքների լուծման եւ հատկապես անօգնական երիտասարդներին պատսպարելու եւ կրթություն տրամադրելու հարցում: Հիմնադրման օրից հաստատությունը օթեւան է տվել 2000 սաների:

Ն. Պ.

AZG NEW 7.QXD 7/22/2009 10:30 PM Page 1



# Սյուզի Քենտիկյանը դեռ շատ երազանքներ ունի իրականացնելու

Երեւանում է WBA-ի եւ WIBF-ի վարկածով գերթեթեւագույն քաշային կարգի աշխարհի չեմպիոնուհի Սյուզի Քենտիկյանը, որը 18 տարվա ընդմիջումից հետո հայրենիք է ժամանել հոր՝ Լեւոն Քենտիկյանի հետ: Երեկ նրանք հյուրընկալվել էին «Տեսակետ» ակումբում:




Սյուզին նախ պատմեց, թե ինչպես է հայտնվել Գերմանիայում եւ զբաղվել բռնցքամարտով: Նա 3 տարեկան էր, որ ընտանիքով տեղափոխվեցին Գերմանիա: Փոքր հասակից զբաղվել է տարբեր մարզաձեւերով՝ կարատե, ջիու-ջիթսու, մարմնամարզություն, լող: 12 տարեկանից հրապուրվեց բռնցքամարտով: Սկզբնական շրջանում ծնողները դեմ էին: Սակայն հայրը ցանկանում էր, որ աղջիկն ինքնապաշտպանական հնարքներ սովորեր: Լեւոն Քենտիկյանը որդուն՝ Միքայելին տարել էր բռնցքամարտի խմբակ: Նրա հետ էր նաեւ Սյուզին, որը նստած հետեւում էր աղջիկների պարապմունքներին: Եվ հանկարծ մարզիչն առաջարկեց Սյուզիին փորձել կատարել վարժությունը: Ստացվեց ու մարզիչն առաջարկեց զբաղվել բռնցքամարտով՝ Սյուզիի մոտ մեծ հեռանկար եւ ուժ նկատելով:

5 տարի Սյուզին սիրողական բռնցքամարտիկ է եղել, 30 մենամարտերից միայն մեկում է պարտվել, որովհետեւ հիվանդ վիճակում էր ռինգ դուրս եկել: Իսկ 16 տարեկանում Սյուզին արդեն պրոֆեսիոնալ պայմանագիր կնքեց Համբուրգի ակումբի հետ: Պրոֆեսիոնալ ռինգում նա առայժմ անպարտելի է, 25 մենամարտերն էլ շահել է, որից 16-ը՝ նոկաուտով:

Սյուզիի կարծիքով, ինքը շատ էներգիա ունի եւ բռնցքամարտն օգնում է այն ստառել: Ռինգում նա կերպարանափոխվում է, դառնում ագրեսիվ, չի խնայում մրցակցուհիներին, որի համար էլ նրան «Մարդասպան թագուհի» մականունն են տվել: Իսկ առօրյա կյանքում նա ոչնչով չի տարբերվում սովորական աղջիկներից, ազատ ժամանակ սիրում է ընկերուհիների հետ շփվել, խոհանոցում ճաշ պատրաստել, սիրած ուտեստը հայկական տոլման է:

Սյուզին համոզված է, որ եթե նորից սկսեր կյանքը, ապա կրկին կընտրեր բռնցքամարտը: Նա դեռեւս 21 տարեկան է եւ մտադիր է երկար տարիներ անցկացնել ռինգում եւ բացի իր երկու գոտիները պաշտպանելուց, այլ գոտիներ եւս նվաճել: Դրանցից մեկը պատկանում է իտալացի բռնցքամարտիկին, սակայն վերջինս չի ցանկանում իր հետ մենամարտել Գերմանիայում: Սյուզին էլ իտալական մաֆիայից է վախենում եւ մտածում է, որ եթե Իտալիայում նրա հետ մենամարտի, ապա իրեն չեն թույլատրի հաղթել մրցակցուհուն:

Վերջին մենամարտն արգենտինացի բռնցքամարտիկի հետ Սյուզիի համար բավական դժվար էր, քանի որ մրցակցուհին ուժեղ էր եւ քաշային հաջորդ կարգի աշխարհի չեմպիոնուհին էր: Սակայն հայ մարզուհուն հաջողվեց հաղթանակած թողնել ռինգը:

Սյուզին շատ ուրախ է հայրենիք այցելելու համար: Երեւանում նա 2 շաբաթվա ընթացքում մտադիր է լավ ծանոթանալ քաղաքին: Բնակվում են Սյուզիի մոր բարեկամների տանը: Նրա ծնողները ծնվել են Երեւանում: Սյուզիի հորական պապը ծնվել է Ռոստովում, տատը՝ Թբիլիսիում: Սյուզին հպարտ է, որ հեռավոր Գերմանիայում բարձր է պահում Հայաստանի մարզական պատիվը, թեեւ ելնելով պրոֆեսիոնալ պայմանագրի պայմաններից, հանդես է գալիս Գերմանիայի դրոշի ներքո:

# Հրաշք տեղի չունեցավ

**Հայաստանի չորս թիմերից եւ ոչ մեկին չհաջողվեց հաղթահարել եվրոգավաթների խաղարկության առաջին փուլի արգելքը: Ֆուտբոլասերները որոշակի հույսեր էին կապել ՀՀ չեմպիոն «Փյունիկի» հետ, որը Երեւանում Զագրեբի «Դինամոյի» հետ հանդիպումն ավարտել էր գոլազուրկ ոչ-ոքիով: Սպասվում էր, որ սեփական հարկի տակ դինամոյականներն առաջին իսկ րոպեներից կնետվեն գրոհների: Սակայն նրանք շատ հանգիստ սկսեցին խաղը, փոխարենը փյունիկցիներն էին ավելի ակտիվ, որոնք արդեն 6-րդ րոպեին Էդգար Մալաքյանի սլացիկ անցումից հետո կարող էին բացել հաշիվը, սակայն Գեւորգ Ղազարյանի հարվածից հետո պաշտպանը փակեց գնդակի ճանապարհը:**




**Նման սկիզբը լավատեսորեն էր տրամադրել հայ մարզասերներին, որոնք բարեհաջող ելքի հույսեր էին փայփայում: Սակայն 30-րդ րոպեին «Փյունիկն» անհեթեթ գոլ բաց թողեց (Մանջուկիչ): Թվում էր, թե ընդմիջումից հետո «Փյունիկը» կանցնի վճռորոշ գործողությունների, կգործի արագ տեմպով, ինչպես դա տեղի ունեցավ թիմերի երեւանյան խաղում: Սակայն երկրորդ խաղակեսում «Փյունիկի» խաղը լրիվ կազմալուծվեց, փոխարենը դաշտի տերերն ակտիվացան եւ շուտով 2 գոլ խփելով (Բադել, Լովրեն) վճռեցին մրցակցության ելքը:**

**Այսպիսով, «Փյունիկը» 2-րդ տարին անընդմեջ չկարողացավ հաղթահարել չեմպիոնների լիգայի առաջին փուլի արգելքը: Ավելին, երկրորդ տարին թիմը եվրոգավաթներում չի կարողանում գոլ խփել:**

**Իսկ ահա մեր հարեւանները հաջող հանդես եկան: Ադրբեջանի չեմպիոն «Բաքուն» պատասխան խաղում հաղթելով Լիտվայի «Էկրանասին» (4-2), մտավ հաջորդ փուլ (առաջին խաղն ավարտվել էր ոչ-ոքի՝ 2-2): Մոլդովայի «Շերիֆը» 1-0 հաշվով հաղթելով ֆիննական «Ինտերին», ուղեգիր նվաճեց: Պայքարը կշարունակի նաեւ Բելառուսի ԲԱՏԷ-ն՝ կրկին 2-0 հաշվով հաղթելով «Մակեդոնիային»: Մյուս հանդիպումների արդյունքներն են (փակագծում առաջին խաղի հաշիվն է). «Ստաբեկ» (Նորվեգիա)-«Տիրանա» (Ալբանիա)՝ 4-0 (1-1), «Սլովան» (Սլովակիա)-«Զրինսկի» (Բոսնիա)՝ 4-0 (0-1), «Ապոել» (Կիպրոս)-«Ստրեյմյուր» (Ֆարերներ)՝ 3-0 (2-0), «Պարտիզան» (Սերբիա)-«Ռիլ» (Ուելս)՝ 8-0 (4-0), «Սան Խուլիա» (Անդորրա)-«Լեւսկի» (Բուլղարիա)՝ 0-5 (0-4):**

## «Հասիսի» մրցակիցները հայտնի են

**Մյունխենում տեղի է ունեցել կանանց բասկետբոլի Եվրոպայի գավաթի խաղարկության մասնակիցների վիճակահանությունը: 38 ակումբները բաժանվել են 10 խմբի: Երեւանի «Հասիսն» ընդգրկվել է «F» խմբում, որտեղ կմրցի Ռուսաստանի «Չեւատսկայի», թուրքական «Բեշիքթաշի» եւ հունական «Աթինաիկոսի» հետ: Հանդիպումները կկայանան սեփական եւ մրցակցի դաշտերում: Մեկնարկը կտրվի նոյեմբերի 12-ին:**

## Սելեշն ընդգրկվեց փառքի սրահում

**Թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման նախկին առաջատար, 35-ամյա Մոնիկա Սելեշը Նյուպորտում մեկնարկած մրցաշարի ժամանակ ընդգրկվել է թենիսի փառքի սրահում: Ազգությամբ սերբ ամերիկուհի թենիսիստուհին 178 շաբաթ գլխավորել է դասակարգման ցուցակը, 9 անգամ հաղթող է ճանաչվել «Մեծ սաղավարտի» մրցաշարերում:**

**1993-ի ապրիլի 30-ին Համբուրգում ընթացող թենիսի մրցաշարի ժամանակ Շտեֆի Գրաֆի երկրպագուներից մեկը դանակով հարվածել էր Սելեշի մեջքին, որի հետեւանքով թենիսիստուհին ստիպված էր եղել մոտ 2,5 տարի ապաքինվել:**

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՉԵՄՊԻՈՆԻ ՀԵՏ

# Արթուր Աբրահամ. «Հոգեպես շատ կտանջվեի, եթե թուրքին պարտվեի»

**Արդեն ավանդույթ է դարձել, որ աշխարհի չեմպիոնի տիտղոսի հերթական հաջող պաշտպանությունից հետո Արթուր Աբրահամը ժամանում է Երեւան եւ հանդիպում լրագրողներին: Հերթական հանդիպումը կայացավ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցում:**

**Անդրադառնալով վերջին մենամարտին, Աբրահամը նշեց, որ թուրք բռնցքամարտիկի հետ մրցավեճը հոգեբանական առումով շատ կարեւոր ու պատասխանատու էր իր համար, այլ զգացումներ ուներ: Շատ ծանր կլիներ, եթե պարտվեր: Նա արժանին մատուցեց մրցակցին, որն այդքան հարվածներ ընդունելուց հետո կարողանում էր ոտքի կանգնել ու շարունակել մենամարտը: Արթուրը չհամաձայնվեց հնչած այն տեսակետին, թե ինքը խնայեց մրցակցին եւ նոկաուտի չենթարկեց: Նա նշեց, որ միշտ էլ ցանկացել է նոկաուտով ավարտել մենամարտը, պարզապես այս անգամ դրա հնարավորությունը չունեցավ: Արթուրը լավ էր ճանաչում Մահիր Օրալին եւ նրա մարզչին, եւ ինքն էր վերջինիս հասկացրել, որ չարժե ռիսկի դիմել ու շարունակել մենամարտը:**




**Արթուրը հաստատեց, որ տեղափոխվել է ավելի բարձր քաշային կարգ (76,2 կգ), իսկ IBF-ի վարկածով միջին քաշում աշխարհի չեմպիոնի գոտին, ընդունված կարգի համաձայն, արդեն հանձնել է: Նա նշեց, որ այլեւս իմաստ չուներ մնալ միջին քաշում, քանի որ Կելի Պավլիկն ու Ֆելիքս Շտուրմն ամեն պատրվակով հրաժարվում էին իր հետ մենամարտելուց: Բացի այդ էլ, մշտապես քաշ գցելու խնդիր էր առաջանում, ինչը վնասակար էր առողջությանը:**

**Այժմ Արթուրը պետք է նախապատրաստվի չեմպիոնների սուպերմրցաշարին, որում եվրոպացի բռնցքամարտիկները նախնական փուլում մրցելու են ամերիկացիների հետ: Ջերմեն Թեյլորի հետ մենամարտը կկայանա նոյեմբերի 7-ին Գերմանիայում: Այնուհետեւ նա կմրցի Անդրե Դիրելի հետ ԱՄՆ-ում, իսկ Կառլ Ֆրոչի հետ մենամարտը կկայանա կամ Գերմանիայում, կամ՝ ԱՄՆ-ում:**

**Արթուրը Նյու Յորքում էր, երբ լսեց Վախթանգ Դարչինյանի պարտության մասին: Ինքը մեկ շաբաթ առաջ էր հեռախոսով խոսել Վախթանգի հետ եւ վստահ էր, որ նա կհաղթի: Արթուրը հավատացած է, որ Վախթանգը կրկին կնվաճի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Արթուրը մինչեւ 2011-ը պայմանագիր ունի Գերմանիայի «Զաուերլանդ» ակումբի հետ, ուստի պարտավոր է ներկայացնել այդ երկիրը: Չնայած նա մշտապես իր հաղթանակները նվիրում է հարազատներին ու Հայաստանին եւ մշտապես ձգտում է բարձր պահել հայ ազգի պատիվը: Նա իրեն անպարտելի չի համարում, սակայն նույնիսկ նարդի խաղալիս չի սիրում պարտվել: Արթուրն առանձնապես ոգեւորված չէ կանանց բռնցքամարտով, թեեւ հարգում եւ լավ հարաբերությունների մեջ է Սյուզի Քենտիկյանի հետ: Նա անկեղծորեն խոստովանեց, որ չէր ցանկանա տեսնել իր կնոջը աչքի տակ կապտուկներով: Թեեւ առայժմ Արթուրը չի գտել իր կյանքի ընկերուհուն:**

**Արթուրի ծրագրերում նախատեսված է Երեւանի Շենգավիթի համայնքում իր անվան բռնցքամարտի դպրոց հիմնել: Այդ հարցով նա խոսել է համայնքի ղեկավար Սերգեյ Հովհաննիսյանի հետ: Իսկ պրոֆեսիոնալ բռնցքամարտի կարիերան ավարտելուց հետո Արթուրը որոշել է զբաղվել անշարժ գույքի եւ ինքնաթիռների բիզնեսով:**

## Հայ ըմբիշների հարուստ ավարը

**Բելգրադում ընթացող ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունում հաջող ելույթներ ունեցան հայ ըմբիշները: Մինչեւ 42 կգ քաշային կարգում Արտակ Հովհաննիսյանը դարձավ Եվրոպայի չեմպիոն՝ եզրափակիչում պարտության մատնելով թուրք Մուամեր Սանչակին: Բրոնզե մեդալների են արժանացել Վոլոդյա Ֆրանգուլյանը (50 կգ), Վալտեր Մարգարյանը (58 կգ) եւ Դավիթ Ապոյանը (69 կգ):**

## Սարգսյանն առաջին կես միավորը կորցրեց

**Կոպենհագենի շախմատի մրցաշարի 5-րդ տուրում Գաբրիել Սարգսյանն առաջին կես միավորը կորցրեց: Նա ոչ-ոքի խաղաց հնդիկ շախմատիստ Նեգի Պարիմարջանի հետ: Սարգսյանը Դրեեւի, Պոստնիի, Հիլարպ-Պերսոնի, Ագրեստի, Բրյունելի, Նեգիի, Համմերի եւ Չմիլիտեի հետ 4,5 միավորով բաժանում է 4-12-րդ տեղերը:**

**Առայժմ առանց միավորի կորստի են ընթանում Վլադիմիր Մալախովը, Պետեր Հայնե Նիլսենը եւ Ջոնի Հեկտորը, որոնք 5-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին:**

## Մովսիսյանի հերթական հաղթանակը

**Անդորրայի շախմատի մրցաշարում Կարեն Մովսիսյանը 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Դանիել Դվիրնիին: Կարենը 4 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքով Ռոման Էդուարդսի եւ Մանուել Լոպեսի հետ գլխավորում է աղյուսակը:**

## Բրոնզե մեդալով

**Խորվաթիայի Օսիեկ քաղաքում անցկացված հրաձգության Եվրոպայի առաջնությունում Նորայր Բախտամյանն արժանացել է բրոնզե պարգեւի: 50 մետրից ատրճանակով վարժությունում նա վաստակել է 651,5 միավոր:**

## Ալեքսանդրի մրցակիցը Ազիզովն է

**Արթուր Աբրահամի եղբայրը՝ Ալեքսանդրն օգոստոսի 29-ին Գերմանիայի Վեստֆալեն քաղաքում միջին քաշում Եվրոպայի չեմպիոնի իր տիտղոսի պաշտպանության համար կմենամարտի Խանլար Ազիզովի հետ: Վերջինս Ռուսաստանի չեմպիոնն է, պրոֆեսիոնալ ռինգում 9 մենամարտ է անցկացրել, որից 6-ում հաղթել է, 2-ն ավարտել է ոչ-ոքի, մեկում՝ պարտվել է: Վերջին մենամարտը նա անցկացրել է փետրվարի 13-ին Բորիս Ակոպովի հետ եւ մրցավարների միաձայն որոշմամբ հաղթել է: Ալեքսանդր Աբրահամն ավելի փորձառու է: Նա պրոֆեսիոնալ ռինգում 26 մենամարտերից 25-ում հաղթել է, մեկում՝ պարտվել:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 7/22/2009 10:30 PM Page 1



# Առավել խելամիտ լինենք

Նորմալ մարդը երբեք իրեն չի տանջի այն հարցով, թե առավոտյան ինքը որ կողմից է վեր կացել, իսկ ուշ երեկոյան չի տառապի, որ վաղ առավոտյան դարձյալ չի տեսել արեւածագը: Ամբողջ օրը ախ ու վախ չի անի, որ առավոտյան հեռուստահաղորդումների ժամանակ հաղորդել են ողբերգական լուրեր. դրանք հաղորդում են ամբողջ օրը: Նորմալ մարդուն չեն արթնացնի Ժան-Ժակ Ռուսսոյի խոսքերով. «Վեր կացեք, կոմս, ձեզ մեծ գործեր են սպասում»:

«Արմենիայի» վրա մեզ ոչ ոք չի արթնացնում: Ամեն ոք հերթափոխի մեջ է: Ամեն առավոտ դիմավորում ենք արեւածագը, ամեն երեկո Հայկը նկարահանում է մայրամուտը: Իսկ հուլիսի 8-ին առաջին անգամ տեսանք երեկոյան փայլատակություն առանց վերջալույսի: Ձյան պես սպիտակ արեւի շուրջը տեսանելի է ամբողջ սպիտակ հորիզոնը:

Վեր ենք կենում, իհարկե, չիմանալով որ ոտքի կողմից: Տեղեկատվություն ստանում ենք կեսօրից հետո, երբ Արիկը բացում է էլեկտրոնային փոստը: Մի խոսքով, «Արմենիայի» տախտակամածը միշտ լիքն է աշխատողներով:

Հուլիսի 9-ի առավոտյան, ինչպես ամեն օր, գրառումներ էի կատարում իմ նոթատետրում: Ընդհանուր նավասենյակից բարձրանում եմ եւ ղեկի մոտ կանգնած Հայկին հարցնում, թե քանի մղոն է մնացել մինչեւ Բարբադոսի ծովախորշը: Պարզվում է՝ 42 մղոն: Մոտավոր հաշվարկով, պահանջվում էր ութ ժամ: Բայց Հայկը սովորականի պես ժպտադեմ չէ: Նա ասաց, որ վերջացել է խմելու ջուրը՝ ոչ միայն բալոններինը, այլեւ բաքերինը: Մենք օվկիանոսում ենք, «Արմենիա» փոքրիկ առագաստանավի վրա: Նման դեպքերում զարմանում ես, թե ինչպես է գործում համեստ ուղեղդ, որի կողքին ամեն մի ճարտարական համակարգիչ խաղալիք է թվում:

Եթե քամին դադարի, հայտնի չէ, թե երբ կհասնենք ցամաք: Նման դեպքերում ծարավն աստիճանաբար վերածվում է խուճապի: Սամվել Կարապետյանը անմիջապես զարմացրեց Կուլիբինի եւ Էդիսոնի իր ընդունակություններով: Նրա վերակերտած շարժիչը աշխատեց: Բայց եթե հանկարծ խափանվի, չենք կարողանա կառանվել:

Նավաստիներից շատերը խոստովանել են, որ դժվարությունները ավելի դժվար են հաղթահարվում կոլեկտիվի հետ, քան անհատական նավարկության ժամանակ: Կոլեկտիվում հաճախ ծագում են հոգեբանական եւ նույնիսկ հոգեկան բարդություններ: Պատահական չէ, որ միջազգային հեղինակավոր առագաստանավային մրցումներում անձնակազմը բաղկացած է առնվազն 6 մարդուց: Նույնիսկ կա օրենք, որը պարտավորեցնում է վերցնել կրտսեր նավաստի:

... Մենք կարծես թե ամեն ինչ նախատեսել էինք, հաշվարկել, որ այսուհանդերձ Բավական է ասել, որ այդ ծովի մակերեսը Սեւ եւ Բալթիկ ծովերի ընդհանուր մակերեսի եռապատիկն է: Կարիբյան ծովի կլիման արեւադարձային է, հունիսից օգոստոսի շարունակվող սեզոնային անձրեւներով: Փոթորիկները, հորդառատ անձրեւները կարող են լուրջ վնասներ հասցնել: Մենք հիշում ենք, որ նույնիսկ ծանծաղ (միջին խորությունը՝ 13 մետր) Ազովի ծովում փոթորիկները եւ քամու պոռթկումները ոչ միայն տնտեսական վնաս հասցրին, այլեւ մարդկային զոհեր պատճառեցին: Բերմուդյան եռանկյունու, Հորն հրվանդանի, Բարեհուսո հրվանդանի, Բիսկայան ծոցի՝ գլոբուսի եւ կենդանի երկրագնդի բազմաթիվ «դիվային



մինե բաքերի ջուրը պետք է մեզ լիովի բավականացներ: Այդ ջուրն օգտագործվել էր նաեւ խոհանոցում ափսեների լվացման համար: Մինչդեռ նավապետը մի անգամ ասել էր, որ այդ նպատակով կարելի է օգտագործել օվկիանոսի ջուրը: Իսկ անակնկալներ պատահում են նույնիսկ ամենափորձառու ճանապարհորդների եւ ծովագնացների հետ: Պետք չէ նվնվալ:

Կարիբյան ծովին մոտենալով մենք չենք մոռանում, որ այդ անվանումը զուտ պայմանական է եւ նույնիսկ խորհրդանշական: Ըստ էության, խոսքը Ատլանտյան օվկիանոսի շարունակության մասին է: Ուրեմն հարկավոր է ականծալից վերաբերմունք:

կետերի» համախտանիշը կարելի է տեսնել ամենուրեք՝ կախված եղանակից: Ինչպես ասում էր մեր բարեկամ Ֆյոդոր Կոնյուխովը, կարեւոր է ոչ թե այն, թե ինչով եւ ում հետ ես նավարկում, այլ, թե ինչպիսին են քամու արագությունը եւ ալեկոծությունը:

Մենք դա միշտ հիշում ենք: Մեզ շատ բան սովորեցրեց մասնավորապես հուլիսի 9՝ Ատլանտյան օվկիանոսում մեր վերջին օրը: Նաեւ հիշում ենք, որ Աստված բարեհաճ գտնվեց. քամին համընթաց էր: Յոթ ժամում հասանք կղզի: Ծարավը մեզ այնքան էլ չտանջեց, սակայն հասկացանք, որ հաջորդ անգամ առավել խելամիտ կլինենք:

## Գրանցված հիշողությունը գանձ է

**Երբեք չեմ բաժանվում իմ նոթատետրից: Բայց քաղաքում, այսպես ասած կենցաղում, հանդիպումների կամ զրույցների ժամանակ ոչ ոք երբեւէ ինձ չի տեսնի նոթատետրը ձեռքիս: Խոստովանում եմ, հաճախ քնելուց առաջ հանում եմ նոթատետրս եւ թարմ հետքերով վերականգնում ինձ շատ հետաքրքրած բաները: Քանզի լավ գիտեմ, որ երբեմն մանրամասնությունները մոռացվելու են:**

**1960-ականներին «Մարդիկ, տարիներ, կյանք» անգին հուշագրքով իմ սերնդին ցնցած Իլյա Էրենբուրգը ազնվորեն խոստովանել է. «Հուշեր կարելի է գրել, իմաստնաբար ամբողջ էջեր դուրս գրելով սեփական գրքերից եւ նոթատետրերից: Իսկ եթե հույս դնես միայն հիշողության վրա, ապա դա կլինի արդեն ֆանտաստիկայի ժանր»:**

**Վերջապես չի կարելի մոռանալ, որ քաղաքակրթությունը սկսվել է գրերի գյուտից: Այնպես որ, երիտասարդ գործընկերներիս խորհուրդ կտամ գրպանում ունենալ գոնե փոքր նոթատետր կամ քառածալ թուղթ: Իսկ տանը պետք է անպայման ունենալ հաստ նոթատետր:**

**Ճանապարհորդելիս ունեցել եմ երեւի հազարավոր փոքր նոթատետրեր: Այդպես է գրվել «Երկնագույն ճանապարհներ» գիրքը օվկիանոսներում նավարկության մասին, «Սպիտակ մարաթոնը» (Կամչատկա եւ Չուկոտկա), «Օջախը» (Հայաստան), «Ճանապարհները» (ԱՄՆ եւ Կանադա): Արդեն երեք հատոր գրել եմ «Կիլիկիա» առագաստանավով մեր նավարկության մասին:**

**Օրերս Ատլանտյան օվկիանոսում ավարտել եմ շատ ծավալուն մի նոթատետր: Կրկին թերթում եմ այն: Եվ ամենից շատ ինձ հետաքրքրում են Հայաստանում կոնկրետ հարազատներ ունեցող կոնկրետ մարդիկ...**

**Հասկանում եմ, իմ ռեպորտաժները հաճախ վերածվում են յուրօրինակ ակնարկների: Այդ տեսքով տպագրելը կամ չտպագրելը խմբագիրների իրավունքն է: Իմ մտահոգությունն ուրիշ է. ե՞րբ է կրկնվելու հայկական շուրջերկրյա նավարկությունը: Եվ իմ նոթատետրը դառնում է գանձարան:**

**ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ**

# Ջրազրկում

**«Երեւան ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ Գառնիի ջրաղբյուրի պոմպակայանի շինարարության հետ կապված՝**

**հուլիսի 24-ին Կենտրոն համայնքի ջրամատակարարումը կիրականացվի ժ.06.00-10.00 եւ ժ.19.00-22.00,**

**հուլիսի 24-ի ժ.9.00-ից մինչեւ հուլիսի 25-ի ժ.9.00-ն կջրազրկվեն Կենտրոն համայնքի Տիգրան Մեծ փ.՝ 30-76, Խորենացի փ.՝ 40-215 հասցեները, Նար-Դոս, Քրիստափոր, Զավարյան, Գլինկա, Լիսինյան փողոցները եւ հարող տարածքները, Էրեբունի համայնքի Ս.Դավիթ, Միչուրին փողոցները եւ հարող տարածքները, Սարի-թաղի շարքերը, 3-րդ եւ 25-րդ փողոցները, Դավիթ Բեկ, Նոր Բութանիա, Վերին Ջրաշեն, Մուշավան թաղամասերը, Նուբարաշեն համայնքը, Նոր Խարբերդ գյուղը եւ անմիջապես Գառնիի ջրատարից սնվող բաժանորդները: Իսկ Էրեբունի համայնքի մնացած հասվածներում ջրամատակարարումը կիրականացվի գրաֆիկի խախտումներով:**

**Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:**

**«Երեւան ջուր» ՓԲԸ**

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

**HIGH-LEVEL E.U. ADVISORY GROUP TO ARMENIA**

**External Vacancy Announcement**

The European Union will deploy a team of high-level EU Advisers (EU Advisory Group) in selected key Armenian administrations to support the implementation of the EU-Armenia European Neighbourhood Policy Action Plan.

The EU Advisory Group will work closely with the Armenian authorities to support their reforms agenda towards democracy, good governance, rule of law and market economy. Specifically, the EU Advisors will provide high-level political and technical advice to design, steer and implement reforms aiming at strengthening the capacity of the Presidency, the Legislative, and Executive and Judiciary powers of Armenia in line with the ENP AP.

The Programme is fully funded by EC and implemented by UNDP. The following position is now open for qualified and experienced candidates.

**1. Interpreters/Administrative Assistants VA 017-09-HR**

Please visit **http://www.undp.am/?page=Jobs** to obtain full Terms of Reference, application procedures and requirements.

Applications can be submitted through **http://oc.undp.am/?go=vacancies**, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan str. Yerevan, Armenia.

Applications can also be sent via post offices within a deadline period indicated below.

A complete application form should consist of a letter of motivation, full CV.

Incomplete applications will not be considered. Only short listed applicants will be contacted.

**Date advertised: 23 July 2009**

**Application deadline: 04 August 2009**

**Please clearly indicate in your application the title of the position and the VA Number**

### Հայտարարություն

Եվրամիությունը Հայաստանյան ընտրված գլխավոր գերատեսչություններում ձեւավորելու է Եվրամիության բարձր մակարդակի խորհրդատուների թիմ (Եվրամիության խորհրդատվական խումբ) սատարելու համար Եվրամիություն-Հայաստան եվրոպական հարեւանության քաղաքականության գործողությունների ծրագրի իրականացումը:

Եվրամիության Խորհրդատվական Խումբը սերտորեն աշխատելու է Հայաստանի իշխանությունների հետ՝ աջակցելու համար բարեփոխումների նրանց օրակարգն ուղղված ժողովրդավարությանը, լավ կառավարմանը, օրենքի իշխանությանն ու շուկայական տնտեսությանը: Եվրամիության Խորհրդատուները հատկապես բարձր մակարդակի քաղաքական եւ տեխնիկական խորհրդատվություն կտրամադրեն բարեփոխումներ մշակելու, ուղղորդելու եւ իրականացնելու համար՝ նպատակ ունենալով ուժեղացնել Հայաստանում նախագահական համակարգի, օրենսդրական, գործադիր եւ դատական իշխանությունների կարողությունները Եվրոպական հարեւանության քաղաքականության գործողությունների ծրագրին համահունչ:

Ծրագիրն ամբողջապես ֆինանսավորվում է Եվրահանձնաժողովի կողմից եւ իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից: Հետեւյալ աշխատատեղը այժմ թափուր է հմուտ եւ փորձառու թեկնածուների համար.

**1. Թարգմանիչներ/ադմինիստրատիվ գծով օգնականներ VA 017-09-HR**

Աշխատանքի ամբողջական նկարագրին, աշխատանքին դիմելու ընթացակարգին եւ պահանջներին ծանոթանալու համար խնդրում ենք այցելել **http://www.undp.am/?page=Jobs** ինտերնետային կայքը:

Դիմումները կարելի է հանձնել ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի պահակակետում (Երեւան, Պետրոս Ադամյան 14) կամ տեղադրել **http://oc.undp.am/?go=vacancies** ինտերնետային կայքում:

Դիմումները կարելի է ուղարկել նաև փոստով:

**Խնդրում ենք ձեր դիմումի մեջ հստակորեն նշել պաշտոնի անվանումը եւ թափուր տեղի հայտարարության համարը:**

Ամբողջական դիմումը պետք է ընդգրկի ուղեկցող նամակ, ինքնակենսագրություն (CV): Թերի դիմումները հաշվի չեն առնվի: Հաջորդ փուլի համար կհրավիրվեն միայն ընտրված թեկնածուները:

**Հայտարարման օրը. 2009, հուլիսի 23**

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը. 2009, 4 օգոստոսի, ժ. 18:00:**




### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ սույն թվականի օգոստոսի 4-ին, ժամը 12.00-ին **ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ գյուղապետարանում** տեղի կունենա **«Էներջի Կոկ» ՍՊԸ-ի** ներկայացրած «Խաչաղբյուր» ՓՀԷԿ-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

Տեղեկությունների համար դիմել ք. Երեւան, Կոմիտաս 29 (կամ Ք. Երեւան, Մ. Հերացու 18, բն. 27): Հեռ.՝ 22-02-18, 22-14-85, 22-15-68, (077) 223-994:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 22.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: